

26.705

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԳԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

Հ. Ս. Խ. Հ. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄՍՍԱՐԻԱՏ

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄԸ 1935 ԹՎԻՆ

ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ 1935 ԹՎԻՆ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐ-  
ԿՈՒՄԸ 1935 Թ. ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Կազմված է ԽՍՀՄ-ի կենտրոնական և ժողովրդական  
1935 թ. մայիսի 31-ի, «1935 թ. գյուղատնտեսական մասին»  
ԱՍՖՆՀ-ի ժողովրդական հունիսի 4-ի «ԱՍՖՆՀ-ում գյուղ-  
տնտեսության կիրառելու կարգի մասին», ՀՍՆՀ-ի ժողովրդական  
հունիսի 10-ի «1935 թ. գյուղատնտեսական մասին» վարչապետի  
և ԽՍՀՄ-ի ֆինանսական հարցերի «1935 թ. գյուղատնտեսության կիրա-  
ռելու կարգի մասին» հրահանգի և գյուղատնտեսական բնակչու-  
թյան ինֆրատնտեսական կիրառելու մասին ԽՍՀՄ-ի ֆին-  
անսական հարցերի 1935 թ. հունիսի 1-ի № 445 հրահանգի հիման  
վրա) .

336 -  
Գ-68



1935 թ.

0 .03 , 2013

26.705

15 JAN 2010

336  
9-68  
ԱՐ

### Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1935 ԹՎԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՏՎԱԾ 1-ԻՆ

ԸՆԴԻԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1 Հոդ. Գյուղատնտեսական հարկի յենթակա յեն՝  
 ա) կոլեկտիվ տնտեսությունները (գյուղատնտեսա-  
 կան կոմունաները, գյուղատնտեսական արտելները և  
 հողը միատեղ մշակող ընկերությունները):  
 բ) կոլտնտեսականների տնտեսությունները.  
 գ) անհատական գյուղացիական տնտեսություննե-  
 րը.

2 Հոդ. Արհեստագործական կոոպերացիայի միու-  
 թյունների մեջ մտնող խառն արհեստագործական-  
 գյուղատնտեսական արտելները հարկվում են գյուղա-  
 տնտեսական հարկով իրենց ամբողջ յեկամուտների հա-  
 մեմատ, յեթե միայն նրանց գյուղական տնտեսու-  
 թյունը հանրայնացված է վոչ պակաս չափով, քան  
 սվյալ շրջանի գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսու-  
 թյուններում:

Ձկնորսական կոլտնտեսությունները, վորոնց մեջ  
 հանրայնացված է նաև այդ կոլտնտեսությունների ան-  
 դամների գյուղատնտեսությունը, հարկվում են գյու-  
 ղատնտեսական հարկով իրենց վողջ յեկամուտների հա-  
 մեմատ (բացի ձկնորսության յեկամուտներից, վորոնք  
 հարկվում են միասնական ձկնորսական տուրքով):

3 Հոդ. Գյուղատնտեսական հարկի հարկային տա-  
 րին սահմանվում է 1935 թ. հունվարի 1-ից մինչև  
 դեկտեմբերի 31-ը:

§ 1. Խառն արհեստագործական-գյուղատնտեսա-  
 կան այն արտելները, վորոնք ունեն արհեստագործա-  
 կան կոլտնտեսության կանոնադրություն, յենթակա

9756  
58175  
37189  
8001

Պետրատի ապարան  
Իլավիտ 237 պատվեր 810,  
Տիրաթ 1200

յեն գյուղհարկի իրենց վողջ յեկամուտներով վորպես գյուղատնտեսական կոլտնտեսություններ նաև այն դեպքում, յեթե արհեստագործական կոլտնտեսությունների անդամներից վոմանք, վոր բնակվում են ուրիշ գյուղերում, իրենց գյուղատնտեսությունը չեն հանրայնացրել:

§ 2. Կոլտնտեսության անդամների աշխատանքի այն վարձատրությունը, վոր ստացված է նրանց կողմից իրենց կոլտնտեսության վողջ-գյուղատնտեսական ձեռնարկության մեջ աշխատելու համար, յեկամտահարկի և կուրտուրքի յենթակա չէ:

§ 3. Արհեստագործական կոլտնտեսությունների համար կանոնադրության 2-րդ հոդվածով սահմանված հարկման կարգը տարածվում է նաև հաշմանդամների կոոպերացիայի միության մեջ մտնող արտելների վրա, յեթե նրանք հանրայնացրել են իրենց արտելի անդամների գյուղատնտեսությունը:

§ 4. Ձկնորսական կոլտնտեսությունների անդամները գյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում, յեթե նրանք պարապում են միայն ձկնորսական արհեստով:

§ 5. Ձկնորսական կոլտնտեսությունների այն անդամները, վորոնք բացի ձկնորսական արհեստի յեկամուտներից ունեն նաև յեկամուտներ գյուղատնտեսությունից և այլ արհեստներից, գյուղհարկի յեն յենթարկվում այն դրույքներով, վորոնք սահմանված են տվյալ վայրում կոլտնտեսականների համար:

§ 6. Կոնտրակտացիայի կարգով իրենց վորսած ձուկը հանձնող այն մենատնտեսները, վորոնք գրադվում են միայն ձկնորսությամբ, գյուղհարկի յենթակա չեն:

Այն մենատնտեսները, վորոնք ձկնորսության հետ գուգահեռ գրադվում են նաև գյուղատնտեսությամբ, յենթարկվում են գյուղհարկի ըստ իրենց բոյոր յեկամուտների՝ մենատնտեսների համար սահմանված ընդհանուր հիմունքներով: Այդ դեպքում, սակայն հաշվի չի առնվում և չի հարկվում ձկնորսությունից

ստացված յեկամուտը, վորը հարկվում է միասնական ձկնորսական տուրքով:

§ 7. Քաղաքի սահմանագծում գտնվող կոլտնտեսությունները և այդ կոլտնտեսությունների անդամները յենթարկվում են գյուղհարկի:

## ՀԱՏՎԱԾ 2-ՐԴ

### ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ա. կոլտնտեսությունների հարկը հաշվելու կարգը

4 հոդ. Ամեն մի առանձին կոլտնտեսության հարկը հաշվարկվում է՝

ա) նրա համար պլանով սահմանված՝ 1934 թ. աշնան և 1935 թ. գարնան աշնանային և գարնանային մշակույթների ցանքի տարածությունների համեմատ:

բ) խոտհարքների և յերկարամյա տունկիների (այգիներ, խաղողանոցներ և այլն) փաստացի տարածությունների համեմատ:

գ) վողջ-գյուղատնտեսական յեկամուտների համեմատ:

Սահմանված պլանից ավելի ցանված աշնանային և գարնանային մշակույթների տարածությունները հարկի յենթակա չեն:

§ 8. Պտղատու այգիները, խաղողանոցները և այլ բազմամյա տունկիները հարկելու ժամանակ, հարկը գանձվում է միայն պտուղ տվող հասակի տունկիներով բռնված տարածությունից, ընդվորում մինչև 0,1 հեկտ. տարածություն ունեցող այգիները գյուղհարկի յենթակա չեն:

§ 9. Հարկը գանձվում է այն խոտհարքի ամբողջ տարածությունից, վորը կոլտնտեսության մեջ հատկացված է վորպես խոտհարք ոգտագործելու համար:

5 հոդ. Կոլտնտեսությունների հարկը հաշվարկելու համար, սահմանվում են հարկի հետևյալ միջին դրույքները ուրբիներով ցանքերի ու տունկերի մի հեկտարից ըստ շրջանների՝

Կամուսաններ յիլ գյուղատնտեսական արտադրանքի համար	Հողագործական բնկերութեան մասին									
	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն	Մզվածություն
Արարան	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Ավանդակներ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Ամստա	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Անտառակ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Բառապահար	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Միկրոս	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Ազդեցիկ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Ֆորիս	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Գլխիկ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Խնամ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Կոտայք	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Ղամախ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Կրոնական	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Ղափան	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Հոկտեմբերյան	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Մարտի	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Արթիկ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Մարի	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Ն. Բայազետ	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Միջան	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Շամաղին	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Մանգիստաու	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Վեդի	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50
Կենտրոն	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50	2-80	3-50

Մյուս մշակութայինները հարկվում են հատիկային բույսերի համար սահմանված դրույքներով:

6 հոդ.— Շրջանի սահմաններում, առանձին մշակութայինների յեկամտարբերութեան մեջ դառնի տարբերութեան լինելու դեպքում, շրջանային գործադիր կոմիտեները, հանրապետութեան ժողովրդական կոմիտեների խորհրդի թույլտվութեամբ, կարող են այդ մշակութայինների նկատմամբ տարբեր դրույքներ սահմանել առանձին գյուղխորհուրդների և կոլտնտեսութեանների համար:

7 հոդ.— Չանազան շրջանների սահմանակից գյուղերի կոլտնտեսութեանների հարկի դրույքների մեջ տարբերութեաններից խուսափելու նպատակով, յեթե այդ տարբերութեանները չեն բղխում անտեսական առանձնահատուկ պայմաններից, շրջանային գործկոմները պարտավոր են դրույքներն ըստ կոլտնտեսութեանների վորոշելուց առաջ համաձայնեցնել հարևան շրջանների գործկոմների հետ:

8 հոդ.— Կոլտնտեսութեան վոչ-գյուղատնտեսական յեկամուտների հարկը հաշվարկվում է յեխնելով 1934 թվի ընթացքում ստացված ընդհանուր յեկամտից և գուրս հանելով բոլոր արտադրական ծախքերը: Այդ յեկամուտներից հարկը գանձվում է հետևյալ դրույքներով.

ա) Կոմունաներից և արտելներից՝ 3,5 կոպեկ և միատեղ հող մշակող ընկերութեաններից՝ 5 կոպեկ յեկամտի յուրաքանչյուր ուրբլուց:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կոլտնտեսութեաններում գյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում ձկնորսութեան այն բոլոր յեկամուտները, վորոնք յենթակա յեն միասնական ձկնորսական տուրքի:

§ 10. Կոլտնտեսութեանների վոչ-գյուղատնտեսական յեկամուտները վորոշվում են շրջանային Փինանսական մարմինների կողմից՝ կոլտնտեսութեանների 1934 թ. տարեկան հաշվետվութեանների հիման վրա:

1934 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակամիջոցի համար:

§ 11. 1934 թ. ընթացքում ստացված վոչ գյուղատնտեսական յեկամուտները հարկվում են նաև այն դեպքում, յեթե կոլտնտեսությունը 1935 թ. այդպիսի յեկամուտներ արդեն չունի: Երջֆինբաթիններին իրավունք է վերապահվում առանձին դեպքերում լրիվ կամ մասնակի չափով ազատել հարկումից 1934 թ. ընթացքում ստացված վոչ գյուղատնտեսական յեկամուտները:

§ 12. Կոլտնտեսության վոչ-գյուղատնտեսական ընդհանուր յեկամտի մեջ մտցվում են.

ա) սեփական վոչ-գյուղատնտեսական արտադրության առարկաների վաճառքի արժեքը և այն գումարները, վորոնք ստացվել են ուրիշ տնտեսություններին պատկանող հումքի վերամշակման համար. բ) կոլտնտեսականներին և շրջակա բնակչությանը հատիկազտման և այլ կայաններով սպասարկելուց, ինչպես և մեքենաները և քարշող ուժը դրսում աշխատեցնելուց ստացված գումարները (բացի բեղմնավորման կայաններից ստացված գումարներից). գ) կոլտնտեսության կողմից կազմակերպված փոխադրական և այլ արհեստներից ստացված յեկամուտները:

§ 13. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտների ընդհանուր գամարի մեջ չեն մտցվում.

ա) անտառամթերումներից և տորֆհանումից ըստացված բոլոր տեսակի վաստակներ (անտառամշակումից, փայտ փոխադրելուց և այլն), բ) կոլտնտեսության սեփական արտադրությունը սպասարկող արհեստանոցներից և ուրիշ ձեռնարկություններից ստացված յեկամուտները, գ) անպետք գույքի, ուտիլի և այլնի վաճառումից ստացված յեկամուտները, դ) փոխառության յեկամուտները, ընթացիկ հաշիվներից ստացվող տոկոսները և ապահովագրական վարձատրությունը:

§ 14. Վոչ-գյուղատնտեսական վաստակների հարկվող յեկամուտը վորոշելու ժամանակ գուրս են հան-

վում արտադրական բոլոր ծախքերը, մասնավորապես՝ ա) հումքի և կիսաֆաբրիկատների արժեքը, բ) վառելանյութի արժեքը, գ) վարձու բանվորների և ծառայողների վճարը, դ) հատուկ չենք և արտադրական կահավորում վարձելու արժեքը և նրանց ընթացիկ վերանորոգման ծախքը, ե) վոչ-գյուղատնտեսական արհեստում զբաղված բանող անասունների համար դնված կերի արժեքը և զ) տվյալ զբաղմունքի կամ ձեռնարկության համար վճարած շրջանառության հարկի գումարը:

Կոլտնտեսության վոչ-գյուղատնտեսական ձեռնարկության մեջ զբաղված՝ իր անդամներին վճարված աշխատանքի վարձատրությունը արտադրական ծախք չի համարվում:

9 հոդ. Բացի գյուղատնտեսական հարկից կոլտնտեսություններն ուրիշ վոչ մի հարկի յենթակա չեն բացի՝ ա) շրջանառության հարկից՝ այն ձեռնարկությունների և զբաղմունքների համար, վորոնք հարկվում են շրջանառության հարկի որենքի համաձայն, բ) ջրային տուրքից՝ ջրովի հողագործության շրջաններում:

§ 15. Կոլտնտեսությունների գյուղհարկի յենթակա ձեռնարկություններից հարկ վոչ-ապրանքային գործարքների համար չի գանձվում:

Բ. ԿՈՒՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆԴՍԱՒՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ԹՈՉԱՒՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵՂՎԱՒՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՁՄԳԱՅՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10 հոդ. Կենդանաբուծության, կաթնատնտեսության, թռչնաբուծության և մեղվաբուծության հետագա զարգացմանը ոժանդակելու նպատակով, կոլտնտեսություններին տրվում են հետևյալ արտոնությունները.

ա) հարկից բոլորովին ազատվում են ամեն տեսակի անասունները, թռչունները, ձագարները և մեղունները.

բ) այն կոլտնտեսություններում, վորտեղ կան ապրանքային ֆերմաներ, հարկից ազատվում են կերաբույ-

սերի ցանքի այն ամբողջ տարածութիւնը, վորի բերքը կոլտնտեսութեան կողմից հանձնվում է ապրանքային Ֆերմային: Հարկից ազատվում է նաև ապրանքային Ֆերմաների վոչ-դյուղատնտեսական ձեռնարկութիւնները յեկամուար:

դ) կոճղահատված հողամասերի խոտհարքները հարկից ազատվում են յերկու տարի ժամանակով, հաշված կոճղահատելու օրից:

§ 16. 10-րդ հոդվածի «բ» կետի կարգով տրվող գեղջի գումարը վորոշվում է կերի ցանքի այն ամբողջ տարածութիւնը գյուղհարկի սահմանված դրույքների վրա բազմապատկելու միջոցով, վորի բերքը կոլտնտեսութեան կողմից հանձնվում է ապրանքային Ֆերմային:

ՈՐԻՆԱԿ՝ Ապրանքային Ֆերման կերով մատակարարելու համար կոլտնտեսութիւնը առանձնացրել է 20 հեկտար բնական խոտհարք, 25 հեկտար ցանովի խոտեր, 15 հեկտար արմատապտուղներ և 10 հեկտար վարսակի ցանք: Գյուղհարկի դրույքները սահմանված են՝ խոտհարքների համար 1 ուրբլի և ցանովի խոտերի, արմատապտուղների ու հատիկային ցանքերի համար 2 ու. 40 կոպ. յուրաքանչյուր հեկտարի համար: Զեղջի գումարը կկազմի 20 հեկտար խոտհարքի ամեն մի հեկտարը 1 ուրբլով— 20 ուրբլի: 50 հեկտար ցանովի խոտերը, արմատապտուղները և վարսակի ցանքի ամեն մի հեկտարից 2 ուրբ. 40 կ. = 120 ու.:

Ընդամենը 140 ու.:

§ 17. Յեթե Ֆերմային կերով մատակարարելը կատարվում է կոլտնտեսութեան կերի ընդհանուր Փոնդից առանց ցանքի ու խոտհարքի տարածութիւնը հատկապես Ֆերմային ամրացնելու, ապա անհրաժեշտ է պարզել Ֆերմային հանձնված կերի քանակը և տվյալ կոլտնտեսութեան համար սահմանված պլանային բերքի համեմատ վերածել կերի այդ քանակը համապատասխան տարածութեան: Ֆերմային հանձնվող կերի քանակը վորոշվում է շրջհողաքանի կողմից: Միևնույն ժամանակ հաշ-

վարկը պետք է կատարվի վոչ միայն Ֆերմային հանձնված սեփական բերքի կերի, այլ և գնված կերի համեմատ, յեթե կերի գնումը նախատեսնված է կոլտնտեսութեան արտադրական պլանով:

Ապրանքային Ֆերմաներին հանձնվող ծոցորը, կալ ու մարազի մնացորդները և արտադրութեան զանազան մնացորդները (թեփ, քուսպ և այլն) տվյալ արտոնութեան շահի վորոշելու ժամանակ հաշվի չեն առնվում:

ՈՐԻՆԱԿ՝ կոլտնտեսութիւնը հանձնել է Ֆերմային 400 ցենտներ մարգագետնի խոտ, 600 ցենտներ յերեքնուկ, 1500 ցենտներ կերի արմատապտուղներ և 200 ցենտներ վարսակ: Տվյալ կոլտնտեսութեան 1935 թ. պլանով բերքի շահի սահմանված է՝ բնական խոտհարքների համար—10 ցենտներ, յերեքնուկի ցանքի համար—30 ցենտներ, արմատապտուղների համար—150 ցենտներ և վարսակի համար—10 ցենտներ յուրաքանչյուր հեկտարից: Կերի այդ քանակի և բերքատվութեան համեմատ վորոշվում է տարածութիւնը և կատարվում է գեղջ հարկից:

խոտհարքներ	400 : 10=40 հեկ.
Յերեքնուկ	600 : 30=20 »
Կերի արմատապտուղներ	1500 : 150=10 »
Վարսակ	200 : 10=20 »
Ընդամենը՝ 90 հեկտար	

§ 18. Ֆերմայի դյուղատնտեսական և արդյունաբերական բոլոր ձեռնարկութիւնները գյուղհարկի յենթակա չեն:

Բեղմնավորման կայանների յեկամուտները գյուղհարկի յենթակա չեն նաև այն դեպքում, յերբ այդ կայանները սպասարկում են մենատնտեսների անասուններին:

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11 Հող. Առաջավոր այն կոլտնտեսութիւնները,

վորոնք կիրառելով ազրոտեխնիկական ձեռնարկումներ գործնականում կատարել են կարևորագույն մշակույթների բերքատուլութունը բարձրացնելու պլանը, զեղչ են ստանում նրանց համար հաշված հարկի չափից մինչև 15 տոկոս: Այդ գումարներով հատուկ ֆոնդ է ստեղծվում տվյալ կոլտնտեսութայան մեջ՝ պարզեատրելու այն լավագույն բրիգադներին ու առանձին հարվածային կոլտնտեսականներին, վորոնք ապահովել են բերքատուլութայան պլանի կատարումը:

§ 19. 11-րդ հոդվածով արտոնութայուն ստանալու իրավունք ունեն միայն այն կոլտնտեսութայունները, վորոնք բերքատուլութունը բարձրացնելու պլանը կատարել են գյուղատնտեսական արտելների որինակելի կանոնադրութայան 6-րդ կետով նախատեսված ազրոտեխնիկ ձեռնարկումներ կիրառելու միջոցով (ցանքաչրջանառութայան ճիշտ կիրառում, խոր հերկ, մոլախոտերի վոչնչացում և այլն):

Զեղչի չափը վորոշվում է հաշվարկված գյուղհարկի գումարի նկատմամբ տոկոսային հարաբերութայամբ, այսինքն զեղչը կատարվում է նախքան բոլոր արտոնութայունների կիրառումը:

11-րդ հոդվածի արտոնութայունը պետք է արվի մինչև 1935 թ. հոկտեմբերի 15-ը: Այդ գումարների հաշվին ստեղծված ֆոնդը մեկ ամիս ժամանակի ընթացքում պետք է ոգտագործվի պարզեատրման համար: Պարզեատրմանը պետք է տրվի լայն հասարակական բնույթ: Շրջֆինրաթինները պարտավոր են ստուգել այդ ֆոնդերի ոգտագործումը:

12 հոդ. Հարկից բոլորովին ազատվում են բոլոր կերարույսերի (առվույտ, յերեքնուկ և այլն), բանջարանոցային մշակույթների և կերի արմատապտուղների սերմարուծարանները:

13 հոդ. Հարկից բոլորովին ազատվում են լյուպինի և այլ մշակույթների այն ցանքերը, վորոնք հերկվում ու թաղվում են հողում, վորպես պարարտանյութ:

## ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՈՒ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14 հոդ. Շաքարի ճակնդեղի ցանքերը բոլորովին ազատվում են հարկից:

15 հոդ. Թելատու վուչի այն ցանքերը, վորոնք կատարվել են աչնանից հերկված խամ հողում, առվույտից հետո և կորդերում (խամ հողում), ազատվում են հարկից:

Թելատու վուչի մյուս ցանքերը հարկվում են արտոնյալ դրույքներով, այն է հացարույսերի դրույքներով:

16 հոդ. Կանեփի ցանքերը (նույն թվում հարավային կանեփի) ամբողջովին ազատվում են հարկից:

17 հոդ. Հարկից բոլորովին ազատվում են.

ա) բամբակի ցանքերը նոր չրջաններում (Ուկրայինա, Հյուսիսային Կովկաս, Ագով-Սեվծովյան յերկիր, Ղրիմի, Դաղստանի ԱՍՈՀ, Ստալինգրադի յերկիր):

բ) ջրովի հողագործութայան բոլոր չրջանների անջրդի հողամասերում կատարած բամբակի ցանքերը:

Բամբակի մյուս բոլոր ցանքերը հարկվում են արտոնյալ դրույքով՝ այն է՝ հացարույսերի դրույքով:

§ 21. ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ Կ(բ)ԿԿ-ի 1935 թ. մարտի 7-ի «1935 թ. բերքի բամբակ. հումքի կոնտրակտացիայի պլանի մասին» վորոշման 12-րդ հոդվածում թված չրջաններում բամբակացան կոլտնտեսութայունները լրիվ ազատվում են հարկից 1935 և 1936 թվերին:

18 հոդ. Հարկից բոլորովին ազատվում են՝ կենսաֆի, կենդիրի, ուամի, կանատնիկի, պերիլի, գենտգերչակի, լյուֆայի, արախիսի, քնջիթի ցանքերը և ցիտրուսային տունկերը, ինչպես և գույլուկի, յեթերային—յուղատու, գեղատեխնիկական բույսերի կոնտրակտացման յենթարկված տարածութայունները:

19 հոդ. Հարկից բոլորովին ազատվում են՝ աչնանավար հողամասերում գեղածաղկի ցանքերը, յեթե կատարվում են ազրոտեխնիկ կանոններ:

20 հոդ. Հարկից լիովին ազատվում են սպիրտի արդյունաբերութեան համար կոնսորակտացիայի յենթարկված յեղերգակի (ցիկորիի) և տոպինամբուրի ցանքերը:

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ  
ՀԵՏԱԳԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

21 հոդ. Գյուղատնտեսական հարկից ազատվում են կոլտնտեսութեանները, վորոնք ըստացվում են նրանց գյուղատնտեսական մթերքների թե հում և թե վերամշակված ձևով վաճառելուց:

§ 22. Բացի կաթի, յուղի, մսի և այլնի վաճառքից ստացված յեկամուտներից, 21-րդ հոդվածի կարգով ազատվում են նաև այն յեկամուտները, վորոնք ստացվում են պանիր, յերչիկային մթերքներ, գինի, չորացրած մրգեր և այլն վաճառելուց, յեթե միայն նրանք արտադրված են սեփական հումքից:

22 հոդ. Չեն հարկվում այն յեկամուտները, վորոնք ստացվում են սունկեր և ամեն տեսակի վայրի պտուղներ (սերմավոր և կորիզավոր), յեղենակաղին, շագանակ, կաղնու պտուղ, ինչպես և վայրի հատապտուղ վաճառելուց:

§ 23. Հարկումից ազատվում են նաև այն յեկամուտները, վորոնք ստացվում են վայրի դեղատեխնիկական բույսեր հավաքելուց:

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒ  
ԹՅԱՆ ԴՐՎԱԾՔԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ**

23 հոդ. Հաշվառումը և հաշվետվութեանը որինակելի հիմքերի վրա դրած կոլտնտեսութեանները հարկի հաշված դրույքից ստանում են մինչև 10 տոկոս զեղչ:

Այդ գումարներով տվյալ կոլտնտեսութեան մեջ ըստեղծվում է հատուկ ֆոնդ՝ հաշվառումն և հաշվետվութեանը որինակելի հիմքերի վրա դրած հարվածային կոլտնտեսականներին պարգևատրելու համար:

§ 24. Հաշվառման և հաշվետվութեան վերաբերյալ արտոնութեանները տրվում են նույն կարգով և նույն ժամկետներում, վորը սահմանված է բերքատվութեանը բարձրացնելու նպատակով արտոնութեանը տալու համար (§ 19): Այդ արտոնութեան չափը սահմանելու ժամանակ հատուկ ուշադրութեան պետք է դարձվի կոլտնտեսութեան ֆինանսական հաշվետվութեան և բրիգադներում աշխատանքի հաշվառման դրվածքի վրա:

Հոդ. 24. — Վերացված է:

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԿՈՒՏՆՏԵՍՈՒ  
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

25 հոդ. Պլանային կարգով նոր վայրեր տեղափոխվող կոլտնտեսութեանները ստանում են հետևյալ արտոնութեանները.

ա) այն կոլտնտեսութեանները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է կոնդահատութեան և այլ միլիորատիվ աշխատանքներ հողը մշակելի դարձնելու համար, վեց տարի շարունակ ազատվում են հարկից:

բ) Այն կոլտնտեսութեանները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ պահանջվում է խամ հողերի մշակում, 4 տարի ազատվում են հարկից:

գ) Այն կոլտնտեսութեանները, վորոնք տեղափոխվել են այնպիսի վայրեր, վորտեղ չի պահանջվում խամ հողերի մշակում, 3 տարի շարունակ ազատվում են հարկից:

Այն կոլտնտեսութեանները, վորոնք տեղափոխվել են Հեռավոր-Արևելքի Յերկիր, Կարելիայի ինքնավար սոցիալիստական խորհրդային հանրապետութեան և Մուրմանի գավառ, 15 տարի շարունակ ազատվում են հարկից:

**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐԲԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ  
ՊԱՏՃԱՌՈՎ**

26 հոդ. Տարբերային աղետներից առևտած կոլեկտիվ տնտեսութեաններն ազատվում են հարկից լրիվ կամ

մասնակի չափով շրջանային գործադիր կոմիտեների կողմից, կրած վնասի համեմատ:

§ 25. Չեղչի չափը վորոշում է հարկային հանձնաժողովը և հաստատում է շրջագործկոմը: Տարրերային աղետի պատճառով տրվող զեղչը չի կարող հիմք ծառայել պետական այլ պարտավորությունների նկատմամբ ևս արտոնություն սահմանելու համար:

§ 26. Տարրերային աղետի հետևանքով արտոնություններ տալու և զեղչի չափը լուծելու համար հիմք պետք է ծառայեն բերքատվության հանձնաժողովի մարմինների յեզրակացությունները, շրջանային ապահովագրական հանձնաժողովների արձանագրությունները (ապահովագրվող ուղեկանների նկատմամբ), գյուղխորհուրդների յեզրակացությունները և ստուգված այլ նյութերը, վորոնք հաստատում են տարրերային աղետի անվիճելիությունը, նրա չափերը և իսկական պատճառները (այսինքն արդյոք տվյալ աղետը տեղի յենենցել կոլտնտեսության վարչությունից անկախ պատճառներով, թե կոլտնտեսության գույքը պահպանելու վերաբերյալ անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնելու և բացահայտ անտնտեսավարության հետևանքով): Բոլոր դեպքերում, յեթե ապահովագրական մարմինների կողմից մերժված է տվյալ աղետի համար ապահովագրական վարձատրության վճարումը, ապա հարկային արտոնություն ևս չի տրվում:

#### ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՍՐԿԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՅԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

27 հոդ. Կոյեկտիվ տնտեսությունների հարկի հաշվարկը կատարում են շրջանային ֆինրաժինները: Վճարման ծանուցագրերը հանձնվում են կոլտնտեսությունների վարչություններին 1935 թ. հուլիսի 15-ից վճռել:

28 հոդ. Հարկը վճարվում է հետևյալ ժամկետներին.

ա). լեռնային և նախալեռնային շրջաններում առա-

ջին ժամկետ— մինչև սեպտեմբերի 15-ը վճարվում է հարկի 50 տոկոսը:

Յերկրորդ ժամկետ— մինչև հոկտեմբերի 15-ը վճարվում է հարկի մնացած 50 տոկոսը:.

բ) գաշտային (բամբակագործական և խաղողագործական) շրջաններում առաջին ժամկետ— մինչև հոկտեմբերի մեկը վճարվում է հարկի 50 տոկոսը:

Չորդ ժամկետ— մինչև նոյեմբերի մեկը վճարվում է հարկի մնացած 50 տոկոսը:

§ 27. Կոլտնտեսությունների հարկման ամբողջ աշխատանքը (ցանքերի տարածության և հարկման յենթակա այլ ուղեկանների հաշվառում, հարկի հաշվարկում, արտոնությունների կիրառում, հարկի գանձում և այլն) պետք է կատարի շրջանային ֆինրաժինը:

§ 28. Հարկը հաշվարկվում է հաշվառման քարտի վրա, վորտեղ այդ նպատակի համար հատկացված են համապատասխան սյունյակներ (Գ. Խ. հաշվետվության ձև № 1-ի հավելում): Հաշվառումը անցկացնելու, և հաշվառման քարտը լրացնելու ու գյուղհարկը հաշվելու համար հատկացված սյունյակները լրացնելու կարգը նշված է ԽՍՀՄ-ի ֆինժողկոմատի 1935 թ. № 443 հրահանգում:

Հաշվառման քարտը լրացնելուց, հաշվարկված հարկի ճշտությունը ստուգելուց և արտոնությունները կիրառելուց հետո, շրջֆինրաժինները ուղարկում են կոլտնտեսություններին քարտի պատճենները և վճարահատուցման ծանուցագրեր:

Վճարահատուցման ծանուցագրերը պետք է ստորագրված լինեն ֆինրաժնի վարիչի կողմից: Հարկի գանձումը պետք է կատարվի հարկային և վոչ հարկային վճարումների գանձման կանոնադրության և ԽՍՀՄ-ի ժողկոմխորհի 1935 թ. մարտի 27-ի վորոշման համաձայն (վորոշում կոլտնտեսությունների հաշվառումն ու ֆինանսները կարգավորելու մասին):

§ 29. Յեթե վճարահատուցման ծանուցագրերը կոլտնտեսությանը հանձնելուց հետո, սակայն մինչև աշխատավորական անհատական տնտեսությունների հա-



մար սահմանված հարկի վճարման առաջին ժամկետի լրանալը, տեղի յեն ունեցել փոփոխություններ կոլտնտեսութեան հաշվառված որչեկանների մեջ նոր տնտեսություններ կոլտնտեսություն մտնելու հետևանքով, ապա կոլտնտեսութեան հարկի համար կազմվում է նոր քարտ, հարկը վերահաշվարկվում է և նրան հանձնվում է նոր ծանուցադիր:

§ 30. Աշխատավորական մենատնտեսների համար սահմանված հարկի վճարման առաջին ժամկետը անցնելուց հետո, նոր տնտեսություններ կոլտնտեսություն մտնելու դեպքում, կոլտնտեսությունների գյուղհարկը չի վերահաշվարկվում: Հարկը վճարելու առաջին ժամկետն անցնելուց հետո, վերահաշվարկում կարող է կատարվել միայն լրացուցիչ արտոնություններ տալու կամ նախկին հաշվարկման մեջ սխալներ հայտնաբերելու դեպքում:

**ՀԱՏՎԱԾ 3-ՐԴ**

**ԿՈԼՏԵՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁՀԱՆՐԱՅՆԱՑՎԱԾ ՄԱՍԻ ՀԱՐԿՈՒՄԸ**

**ԿՈԼՏԵՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ**

29 հոդ. Չհանրայնացված յեկամուտներ չունեցող կոլտնտեսականները լրիվ ազատվում են հարկից:

§ 31. Չեն հարկվում այն կոլտնտեսականները, վորոնք չունեն և տնամերձ հողամասեր, և վոչ վարձու վոչ-գյուղատնտեսական յեկամուտներ, ինչպես և չեն հարկվում անտառամշակումից և տորֆամշակումից կոլտնտեսականների ստացած յեկամուտները (անտառամշակում, անտառափոխադրում և այլն):

§ 32. Միայն խոտհարքներ ունեցող այն կոլտնտեսականները, վորոնք ոգտագործում են այդ խոտհարքները բացառապես իրենց անասունների համար, համարվում են տնամերձ հողամասեր չունեցող կոլտնտեսականներ:

30 հոդ. Չհանրայնացված յեկամուտներ ունեցող

կոլտնտեսականները (բանջարանոցից, այգուց, և այլն) գյուղհարկ են վճարում 10—40 ոուբլի:  
Ըստ չրջանների սահմանվում են հետևյալ կայուն դրույքները.

Շրջանների անունները	Հարկի կայուն դրույքները ոուբլիներով
1) Աբարան, Բասարգեչար, Մարտունի, Ն. Բայազետ	12 ո.
2) Ախտա, Գորիս, Ղափան, Միկոյան, Ս. գիղբեկով, Սիսիան, Թալին, Շամշադին Վեդի . . . . .	16 ոուբ.
3) Ալլահվերդի, Արթիկ, Ամասիա, Դիլիշան, Կիրովական, Հոկտեմբերյան	20 ոուբ.
4) Իջևան, Կոտայք, Լենինական, Մեղրի Աշտարակ, Ստեփանավան	25 ոուբ.
5) Վաղարշապատ, Յերևան	30 ոուբ.
6) Ղամարու	35 ոուբ.

31 հոդ. Յեթե կոլտնտեսականները ունեն չհանրայնացված գյուղատնտեսութեան հետ զուգահեռ մշտական յեկամուտներ վոչ կոոպերացված տնայնա-արհեստավորական զբաղմունքներից, ապա նրանց գյուղհարկի դրույքը բարձրացվում է 50 տոկոսով:

Այն դեպքերում, յերբ տնայնա-արհեստավորական զբաղմունքը կրում է պատահական բնույթ և այդ ըզբաղմունքների յեկամուտները աննշան են, նման տնտեսությունների նկատմամբ հարկի դրույքի բարձրացում չի կատարվում:

31—ա հոդ. Այն աշխատավոր մենատնտեսները, վորոնք կոլտնտեսություն են մտել մինչև տվյալ չրջանի (գյուղի) համար սահմանված հարկի վճարման առաջին ժամկետը, հարկվում են վորպես կոլտնտեսականներ:

§ 33. Այն կոլտնտեսականների տնտեսությունները,

վորոնք ունեն յեկամուտներ չկողպերացված տնայնա-  
արհեստավորական գրադմունքներից և այլ վոչ գյուղա-  
տնտեսական յեկամուտներ վոչ վարձու աշխատանքից,  
սակայն չունեն տնամերձ հողամասեր, հարկվում են ո-  
րենքի 30-րդ հոդ. սահմանված կարգով:

§ 34. Գյուղխորհուրդները կազմում են այն տնտե-  
սությունների ցուցակները, վորոնց հարկը պետք է  
բարձրացվի որենքի 31-րդ հոդ. կարգով: Այդ ցուցակ-  
ները հաստատվում են շրջագործկոմի կողմից:

§ 35. 1935 թ. կոլտնտեսությունից դուրս յեկած  
կամ վտարված տնտեսությունները, յեթե նրանք յեն-  
թակա չեն հարկման անհատական կարգով, հարկվում  
են գյուղհարկով վորպես աշխատավոր մենատնտեսներ  
իրենց այն յեկամտի աղբյուրների համեմատ, վորոն-  
ցով նրանք մտել են կոլտնտեսություն (ցանք, խոտ-  
հարք, անասուն և այլն) ինչպես և տնտեսության չհան-  
րայնացված մասի համեմատ: Այդ յեկամուտների հար-  
կը հաշվարկվում է մենատնտեսների համար սահման-  
ված յեկամտարերության նորմաներով և դրույքների  
աղյուսակով: Կոլտնտեսություններից վտարված տըն-  
տեսություններին վոչ մի արտոնություն գյուղհարկից  
չի տրվում:

Այն դեպքերում, յերբ կոլտնտեսությունից դուրս  
գալը համաձայնեցված է կոլտնտեսության վարչության  
հետ և բղխում է հարգելի պատճառներից (որինակ ար-  
տադրության մեջ անցները և այդ կապակցությամբ  
տվյալ գյուղից հեռանալը), հարկումը կատարվում է  
այն որ յեկամտների համեմատ, վոր ունի տնտեսությունը  
հարկման մոմենտին: Հարկումը կատարվում է մենա-  
տնտեսների համար սահմանված յեկամտարերության  
նորմաներով և հարկի դրույքների աղյուսակով, ըստ  
վորում տրվում են աշխատավորական մենատնտեսների  
համար նախատեսված բոլոր արտոնությունները:

32 հոդ. Այն տնտեսություններին, վորոնց կազմում  
կան յերկու հոգուց վոչ ավելի աշխատունակ անդամներ,  
ընտանիքի վոչ աշխատունակ անդամների համար հաշ-

ված հարկից զեղչ է տրվում հետևյալ չափով՝ յերեք  
անաշխատունակ անդամ լինելու դեպքում հարկի չա-  
փից զեղչվում է 20 տոկոս, չորս և ավելի անաշխատու-  
նակ անդամ լինելու դեպքում — 30 տոկոս:

§ 36. Յեթե կոլտնտեսականների տնտեսություննե-  
րը հարկվում են գյուղհարկով 31-րդ հոդ. նախատես-  
նված հավելման կիրառումով, ապա անաշխատունակնե-  
րի համար տրվող զեղչը կատարվում է գյուղհարկի  
ամբողջ գումարից (ներառյալ և հավելումը):

§ 37. Տնտեսություններին 32-րդ հոդ. կարգով ար-  
տոնություն տալու խնդիրը լուծելու համար անաշխա-  
տունակությունը վորոշվում է հասակի համաձայն: Այն  
հասակը, վորն իրավունք է տալիս արտոնություն ստա-  
նալու համար վորոշվում է հետևյալ կարգով.

Անաշխատունակ են համարվում՝ ա) մինչև 16 տա-  
րեկան հասակ ունեցողները, բ) 60 տարեկանից վեր հա-  
սակ ունեցող տղամարդիկ և 55 տարեկանից վեր հասակ  
ունեցող կանայք:

Անկախ հասակից անաշխատունակ են համարվում  
պատերազմի և աշխատանքի այն հաշմանդամները, վոր-  
ոնք ոգտվում են 39-րդ հոդ. սահմանված արտոնու-  
թյամբ և բացահայտ այն հաշմանդամները, վորոնք չեն  
կարող մասնակցել դաշտային աշխատանքներին:

Յերեք և ավելի աշխատունակ անդամներ ունեցող  
տնտեսություններին, անկախ անաշխատունակների թը-  
վից 32-րդ հոդ. կարգով զեղչ չի տրվում:

Աշխատունակ անդամների թիվը հաշվելու ժամա-  
նակ, նկատի չեն առնվում այն անձինք, վորոնք գրան-  
վում են Կարմիր բանակում:

Որինակ՝ յեթե տնտեսությունն ունի 3 աշխատու-  
նակ անդամներ, վորոնցից մեկը գտնվում է Կարմիր  
բանակում, նա «32-րդ հոդ. կարգով անաշխատունակ-  
ների համար սահմանված արտոնությունով ոգտվելու  
իրավունքից չի զրկվում:

33 հոդ. Աշխատավարձը հարկվում է վոչ թե գյու-  
ղատնտեսական հարկով, այլ յեկամտային հարկով ըստ  
աշխատանքի վայրի:

Կոլտնտեսութեան անդամ բանվորներն ու ծառայողները, յետե նրանք իրենք և նրանց ընտանիքի աշխատունակ անդամները չեն աշխատում կոլտնտեսութեան մեջ, կամ նրանց աշխատանքը կրում է պատահական, վոչ սխտեմատիկ բնույթ (որինակ՝ արձակուրդի ժամանակ, հանգստի օրերին և այլն) և արտահայտվում է աննշան աշխորերով, չպետք է յենթարկվեն գյուղատնտեսական հարկի այն դեպքերում, յերբ նրանց չհանրայնացված գյուղական տնտեսութեանը չի դերագանցում 69-րդ հոդվածում մատնանշված չափից:

### Բ. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ

34 հոդ. Կոլտնտեսականների չհանրայնացված յեկամուտները հարկելիս, հաշվի չեն առնվում կոլտնտեսութեանից ստացված յեկամուտները (աշխորերի վարձատրումը):

35 հոդ. Անասնարուծութեան, թռչնարուծութեան ու մեղվարուծութեան զարգացմանը ոժանդակելու նպատակով, հարկից ազատվում են կոլտնտեսականների բոլոր անասունները, թռչունները, ճագարները և մեղուները:

36 հոդ. Կոլտնտեսական անասունները զարգացնելու նպատակով կոլտնտեսականների նկատմամբ չի կիրառվում մենատնտեսների համար սահմանված գյուղատնտեսական մթերքները շուկայում վաճառելուց ստացած յեկամուտների հատուկ հարկումը (որենքի հոդ. 61):

37 հոդ. Գյուղխորհուրդները կարող են ամբողջովին կամ մասամբ ազատել հարկից կոլտնտեսականների առանձին սակավազոր տնտեսութեանները:

Սակավազորութեան պատճառով հարկից ամբողջովին, կամ մասամբ ազատվող տնտեսութեանների ցուցակները ներկայացվում են շրջանային հարկային հանձնաժողովին ի հաստատութեան:

§ 38. Գյուղխորհուրդների կողմից կազմված սակավազոր տնտեսութեանների ցուցակները, մինչև շրջանային հարկային հանձնաժողովներին ի հաստատու-

թեան ներկայացնելը, պետք է անպայման քննարկվեն գյուղխորհուրդներին պլենումներում:

Սակավազորների ցուցակը չմտցրած տնտեսութեանները կարող են ինքնուրույն գիմում տալ գյուղխորհուրդին հարկից ազատելու մասին: Գյուղխորհուրդները պարտավոր են քննութեան առնել այդ գիմումները և իրենց յեղբակացութեամբ ուղարկել շրջանային հարկ հանձնաժողովին:

38 հոդ. Տեղափոխվող կոլտնտեսութեանների անդամների տնտեսութեաններն ազատվում են հարկից նույնքան ժամանակով, վորքան ժամանակով ազատվում են կոլտնտեսութեանները:

§ 39. Յերկու տարով հարկից ազատվող բամբակացան կոլտնտեսութեանների անդամների տնտեսութեանները լրիվ ազատվում են հարկից նույնքան ժամանակով, (չլահանգի § 21):

39 հոդ. Հարկից ազատվում են կոլտնտեսականների այն տնտեսութեանները, վորոնց կազմի մեջ մտնում են.

ա) Սորհրդային Միութեան հերոսներ, ԽՍՀՄ-ի շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձինք և աշխատանքի հերոսներ:

բ) Հաշմանդամութեան առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին պատկանող պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ:

§ 40 39-րդ հոդ. «բ» կետի կարգով հարկից ազատվում են միայն այն կոլտնտեսականների տնտեսութեանները, վորոնց գլխավոր անդամը պատերազմի կամ աշխատանքի հաշմանդամ է, ունի սոցապի կամ ապահովագրութեան մարմինների (ՀԱՄԿՍ-ի մարմինների) կողմից տրված տեղեկանք հաշմանդամութեան մասին: Այդ վկայականների ներկայացումը պարտադիր է, յետե չկա հաշմանդամութեան ակնհայտ հատկանիշներ:

Յեթե ընտանիքի գլխավոր անդամը անաշխատունակ է, ապա այդ արտոնութեանը տրվում է նաև այն դեպքում, յերբ հիմնական աշխատավորը հաշմանդամ է:

40. Հող. Այն տնտեսությունների համար, վորոնց կազմի մեջ մտնում են սահմանված ուսման և հավաքի համար կանչված պահեստի զինվորական ծառայողներ և զինապարտներ, հարկի այն մասը, վորի մոժեկու ժամկետը զուգադրվում է ուսման կամ հավաքի ժամկետին, հետաձգվում է նրանց վերադառնալուց մի ամիս ժամանակով:

41 Հող. Տարրերային աղետներից տուժած տրնտեսությունները շրջանային հարկային հանձնաժողովների կողմից ազատվում են հարկից ամբողջովին կամ մասամբ՝ նայած տնտեսության կրած վնասի չափին, և տնտեսության կարողությանը:

§ 41 Հարկային հանձնաժողովի վորոշումը տարրերային աղետի հետևանքով հարկից զեղչ կատարելու մասին չի կարող հիմք ծառայել պետական այլ պարտավորությունների նկատմամբ արտոնություններ տալու համար:

§ 42 Տարրերային աղետի հետևանքով արտոնություններ տալու և զեղչի չափը վորոշելու համար, հիմք պետք է ծառայեն շրջանային ապահովագրական հանձնաժողովների արձանագրությունները (ապահովող որջեկանների նկատմամբ), գյուղիտրհուրդներին, կոլտրնտեսությունների վարչությունների յեզրակացությունները և ուրիշ ստուգված նյութերը, վորոնք հաստատում են տարրերային աղետի անվիճելիությունը, նրա չափերը և իրական պատճառները (այսինքն տվյալ աղետը տեղի յե ունեցել կոլտնտեսականներից անկախ պատճառներով, թե դույքը պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնելու արդյունք է): Ի ուր դեպքերում, յերբ ապահովագրական մարմինները կողմից տվյալ աղետի համար ապահովագրական վստճատության վճարումը մերժված է, հարկի վերաբերյալ արտոնություն չի արվում:

42 Հող.— Հարկից լրիվ ազատվում են գյուղի սոցիալիստական վերակառուցման և հանրային սեփականության պահպանման պայքարում կոլակային

վերեփնդությունից տուժած գյուղական ակտիվիստների ընտանիքները:

43 Հող.— Հարկից լրիվ ազատվում են պետական դույքի պահպանման պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ կամ պարտականությունների կատարման հետևանքով սպանված անտառային աշխատողների ընտանիքները:

44 Հող.— Բացի վերևում թված բոլոր արտոնություններից կոլտնտեսականներին արտոնություններ են տրվում նաև 70, 71, 73, 74, 75, 76, 77, 78, 86, 88 և 89-րդ հոդվածների կարգով:

### Գ. ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

45 Հող.— Կոլտնտեսականների գյուղհարկի վճարման համար ըստ առանձին շրջանների սահմանվում են հետևյալ ժամկետները՝

ա) Աբարանի, Ախտայի, Բասարգեչարի, Նոր-Բայաղետի, Մարտունու, Լենինականի, Արթիկի, Թալինի, Իլիչի, Իջևի, Սիսյանի, Գորիսի, Ղափանի, Միկոյանի Ազիզբեկովի, Ստեփանավանի, Ալլահվերդու, Ամասիայի և Մեղրու շրջանների, Կոտայքի, Աշտարակի, Վաղարշապատի և Վեդիի լեռնային մասի համար՝

1-ին ժամկետը— 1935 թ. մինչև սեպտեմբ. 15-ը պետք է վճարվի հարկի 50 0/0-ը:

2-րդ ժամկետ— մինչև 1935 թ. հոկտեմբերի 15-ը, պետք է վճարվի հարկի 25 0/0-ը:

3-րդ ժամկետ— մինչև 1935 թ. նոյեմբերի 15-ը, պետք է վճարվի հարկի 25 0/0-ը:

Ղամարլի, Հոկտեմբերյանի, Յերևանի շրջանների և Աշտարակի, Կոտայքի, Վաղարշապատի և Վեդիի դաշտային մասերի համար՝

1-ին ժամկետ— մինչև 1935 թ. սեպտեմբերի 15-ը, պետք է վճարվի հարկի 25 0/0-ը:

2-րդ ժամկետ— մինչև 1935 թ. հոկտեմբերի 15-ը, պետք է վճարվի հարկի 50 0/0-ը:

3-րդ ժամկետ—մինչև 1935 թ. նոյեմբերի 15-ը, պետք է վճարվի հարկի 25 0/0-ը:

46 հոդված.— Յուրաքանչյուր շրջանի համար սահմանված ժամկետներն անպայման հրապարակվում են ի գիտություն բոլորի, հայտարարվում են գյուղական ժողովներում, ցույց են տրվում վճարման ծանուցադրերում և հարկային ամբողջ տարվա ընթացքում չեն փոխվում:

§ 43. Կոլտնտեսականների գյուղհարկի հաշվարկը գյուղխորհուրդները կատարում են տնտեսությունների գրքի 12-րդ հատվածում (գյուղխորհուրդների հաշվառման ձև № 2—ա.):

§ 44. Հարկի հաշվարկման ճշտությունը ստուգելուց և արտոնությունները կիրառելուց հետո, գյուղխորհուրդները վճարողներին հանձնում են ծանուցագրեր (գյուղխորհուրդների հաշվառման ձև № 20—ա.): Ծանուցագրերը պետք է ստորագրված լինեն գյուղխորհրդի նախագահի կողմից և հանձնվեն վճարողներին հարկի վճարման ժամկետից առնվազն 10 որ առաջ:

§ 45. Կոլտնտեսականները հարկը պետք է վճարեն իրենց անձնական յեկամուտներից: Հարկի ապառքներն անմիջորեն գանձվում են կոլտնտեսականներից: Կատեգորիկ կերպով արգելվում է կոլտնտեսականների վրա հաշվող վճարումների և ապառքների գանձումը կոլեկտիվ տնտեսություններից:

Կոլտնտեսականների ապառքների գանձումը դարձվում է նրանց ստացած յեկամուտների և չհանրայնացված գույքի վրա, ճիշտ այն կարգով, վորը սահմանված է հարկային և վոչ հարկային վճարումների գանձման կանոնադրությամբ:

Արգելվում է գանձումը դարձնել կոլեկտիվ տնտեսությունից ըստ աշխուրդների հասանելիք, սակայն դեռ չստացված դրամական գումարների և մթերքների վրա:

#### ՀԱՏՎԱԾ 4.

#### ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ա. Ընդհանուր կանոններ.

47. հոդ.— Յուրաքանչյուր առանձին աշխատավորական մենատնտեսի գյուղհարկը հաշվվում է տնտեսության ամբողջ յեկամտից, վոր ստացվում է՝

ա) դաշտամշակությունից.

բ) մարգագործությունից.

գ) ամեն տեսակի անասուններից, բացի խոզերից.

դ) գյուղատնտեսական հետևյալ հատուկ ճյուղերից՝ բանջարբուծությունից, բոստաններից, այգեգործությունից, խաղողագործությունից, ծխախոտագործությունից և թթանոցներից:

ե) Արհեստավորական և տնայնագործական զբաղմունքներից ու այլ վոչ-գյուղատնտեսական զբաղմունքներից, բացի աշխատավարձից, վորը հարկվում է յեկամտահարկով ըստ աշխատանքի վայրի:

Ծանոթություն 1.— Վորտորության յեկամուտները գյուղատնտեսական հարկի է յենթարկվում միմիայն այն շրջաններում, վորտեղ այդ զբաղմունքն արդյունաբերական զարգացում է ստացել:

Ծանոթություն 2.— Ձկնորսության յեկամուտները գյուղատնտեսական հարկի յեն յենթարկվում միմիայն այն տնտեսություններում, վորոնք իրենց վորսած ձուկը կոնտրակտացիայով չեն հանձնում պետական ձկնորսական արդյունաբերական ձեռնարկություններին, կամ կոոպերատիվ կազմակերպություններին:

§ 46. գյուղհարկի յենթակա յեն բոլոր այն մենատնտեսները, վորոնք ունեն յեկամուտներ ինչպես հողամասերի, նույնպես և բանող ու մթերատու անասունների մասերի: Գյուղական վայրերում բնակվող այն ոգտագործումից: Գյուղական վայրերում բնակվող այն անձինք, վորոնք չունեն գյուղատնտեսական յեկամուտներ, հարկվում են յեկամտահարկով շրջֆինրաթինների կողմից: Այն բանվորներն ու ծառայողները, վորոնք

վարում են գյուղատնտեսութուն տնամերձ հողամասերում, ազատվում են գյուղհարկից որենքի 69-րդ հոդ. կարգով:

§ 47 Արդյունաբերական զարգացմանը հասած՝ վորսորդական շրջանների ցուցակները սահմանվում են յերկրային և մարդային գործադիր կոմիտեների և դաշնակից ու ինքնավար հանրապետութունների ժողովոմխորհների վորոշումներով:

48 հոդ.— Գյուղհարկի յենթակա չեն շերամապահության, թռչնաբուծության, ճագարաբուծության, խոզաբուծության և մեղվաբուծության յեկամուտները:

49 հոդ.— Գյուղհարկի յենթարկված յեկամտի աղբյուրներն ուրիշ վոչ մի հարկի յենթակա չեն, բացի՝ ա) արհեստահարկից, վորը գանձվում է շրջանաության տոկոսային հարաբերությամբ հարկվող զբաղմունքներից:

բ) ջրային տուրքից ջրովի հողագործական շրջաններում.

գ) ձկնորսությամբ պարապելու իրավունքի համար գանձվող տոմսային տուրքից:

Այն հողամասերից, վորոնց յեկամուտները յենթակա յեն գյուղհարկի ինչպես և չենքերով զբաղեցրած այն հողամասերից, վորոնք անմիջականորեն կապված են գյուղատնտեսական ոգտագործման հետ, ոենտա չի գանձվում:

Գյուղհարկի յենթակա տնտեսությունների կազմի մեջ մտնող չենքերը ազատվում են չենքերի տեղական հարկից:

50 հոդ.— Այն անձինք, վորոնք գյուղատնտեսությամբ են զբաղվում քաղաքային հողերում, պետք է իրենց յեկամուտներից վճարեն կամ գյուղհարկ, կամ յեկամտային հարկ:

ՀՄԽՀ բոլոր գյուղական վայրերում և շրջանային կենտրոններում գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք յենթակա յեն գյուղհարկի: Յերևան, Լենինական և Կիրովական քաղաքներում գյուղհարկի յենթարկվում են գյուղատնտեսությամբ զբաղվող միայն կուլակային տնտեսությունները:

51 հոդ.— Քաղաքներում ապրող քաղաքացիները, գյուղհարկ են վճարում ընդհանուր հիմունքներով քաղաքից դուրս ունեցած գյուղատնտեսության յեկամուտների համեմատ:

Քաղաքներում ստացած յեկամուտների համար նույն քաղաքացիները յենթարկվում են յեկամտային և այլ հարկերի ամբողջ քաղաքային բնակչության հետ հավասար հիմունքներով:

Բ. ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏԵՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿՈՂ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

ՅԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ

52 հոդ.— Աշխատավոր մենատնտեսների դաշտամշակությունից, մարդագործությունից, կենդանաբուծությունից, բանջարաբուծությունից բուստաններից, այգիներից, խաղողագործությունից, ծխախոտագործությունից և այլ հատուկ ճյուղերից ստացված յեկամուտները վորոշվում են ըստ յեկամտաբերության նորմամաների:

53 հոդ.— Յեկամտի թված աղբյուրների համար սահմանվում են յեկամտաբերության հետևյալ նորմաներն ըստ առանձին շրջանների՝  
(Տես աղյուսակ 30-րդ էջում)

54 հոդ.— Շրջանի սահմաններում առանձին մշակույթների յեկամտաբերության մեջ զգալի տարբերություն ունենալու դեպքում, շրջանային գործադիր կոմիտեները կարող են յեկամտաբերության տարբեր նորմաներ սահմանել առանձին գյուղխորհուրդների և գյուղերի համար:

55 հոդ.— Զանազան շրջանների սահմանակից գյուղերի յեկամտաբերության նորմաների խոշոր տարբերությունից խուսափելու նպատակով, (յեթե այդ տարբերությունները չեն բղխում տնտեսական առանձնահատուկ պայմաններից), շրջանային գործադիր կոմիտեները պարտավոր են նորմաներն ըստ գյուղերի վորոշելուց առաջ, համաձայնեցնել հարևան շրջանների գործկոմների հետ:

ԴԱՇՏԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ, ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐԻ ՅԵՎ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՃՅՈՒՂԵՐԻ  
ՅԵԿԱՄՏԻ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

№ համար կարգի	ՇՐՋԱՆԻ ԱՆՈՒՆԸ	Հատկապես ցանքեր	և քանակը	Կատարողը	Միավոր	Պատասխանատու արդիներ	Պատասխանատու արդիներ	Պատասխանատու արդիներ	Ձեռք, չորի-ներ, ուղղանկյունի	Կովեր, մատակեր	Յեղներ, գունդներ	Եջեր	Այծեր, վոշ-խարներ
1	Աբարան	70	550	200	500	600	—	26	90	75	65	15	6
2	Ամասիա	80	550	200	500	600	—	28	»	80	»	»	»
3	Ալլահվերդի	90	700	225	550	750	750	28	»	80	»	»	»
4	Արթիկ	80	550	200	500	600	—	26	»	65	»	»	»
5	Ախաս	70	550	250	500	600	—	26	»	75	»	»	»
6	Աշտարակ	90	750	200	550	850	880	26	»	65	»	»	»
7	Բասարզեզար	70	550	225	500	600	—	26	»	75	»	»	»
8	Գորիս	80	550	225	500	800	750	22	»	65	»	»	»
9	Դիլիջան	80	750	250	500	800	—	28	»	80	»	»	»
10	Իջևան	90	600	225	610	750	750	26	»	75	»	»	»
11	Կիրովական	80	750	250	500	800	—	28	»	80	»	»	»
12	Ղափան	74	600	200	610	700	—	22	»	60	»	»	»
13	Մեղրյան	74	600	200	550	750	830	22	»	65	»	»	»
14	Յոտայք	90	750	250	610	800	830	26	»	75	»	»	»
15	Հենինական	90	750	250	500	600	—	26	»	80	»	»	»
16	Մարտունի	74	550	225	500	600	—	26	»	75	»	»	»
17	Մեղրի	70	700	200	500	850	880	22	»	60	»	»	»
18	Ն. Բայազետ	74	550	225	500	600	—	26	»	80	»	»	»
19	Աղիզբեկովի	74	550	200	500	700	750	22	»	65	»	»	»
20	Կիսյան	90	550	200	500	700	—	26	»	75	»	»	»
21	Ստեփանավան	90	700	250	500	700	—	32	»	85	»	»	»
22	Թալին	80	600	225	500	600	750	22	»	65	»	»	»
23	Շամղաղին	80	600	225	600	650	750	22	»	65	»	»	»
24	Վաղպատ	140	900	200	600	850	880	26	»	75	»	»	»
25	Վեդի	120	700	200	600	750	880	26	»	75	»	»	»
26	Ղամաքյու	140	900	200	600	850	970	26	»	75	»	»	»
27	Հոհտեմբեր ան	140	850	200	600	800	880	26	»	75	»	»	»
28	Յերևան	140	900	200	600	850	970	26	»	75	»	»	»
Միջին		83	690	235	600	770	880	28	90	75	65	15	6

56 հոդ.— Դաշտամ շակության, բանջարաբուծու-  
թյան, բոստանների, խաղողի ալգիների, մրգատու  
պարտեզների և ծխախոտագործության հարկման յեն-  
թակա յեկամուտը վորոշվում է՝

ա) աշնանացան ու գարնանացան մշակույթների  
ցանքի այն տարածության համաձայն, վորը սահման-  
ված է տվյալ տնտեսության համար 1934 թ. աշնան և  
1935 թ. գարնան ցանքերի պլանով:

բ) խոտհարքների և բազմամյա տունկիների (պղտ-  
ղատու պարտեզներ, խաղողի ալգիներ և այլն) փաստա-  
կան տարածության համաձայն:

Յեթե աշխատավորական մենատնտեսը կատարում է  
իր համար 1934 թ. աշնան և 1935 թ. գարնան ցանքի  
սահմանված պլանից ավելի ցանք, ապա ավելի ցանած  
տարածությունը հարկվում է յեկամտաբերության կես  
նորմայով հաշված յեկամտից:

§ 48. Յեկամտաբերության կես նորմայով հարկ-  
ման կարգը չի կիրառվում այն մշակույթների նկատ-  
մամբ, վորոնց համար տնտեսությունը պլան չի ստա-  
ցել: Այդ մշակույթները հարկվում են փաստական տա-  
րածության և յեկամտաբերության լրիվ նորմաների  
համեմատ:

§ 49. Պողատու ալգիների, խաղողանոցների և այլ  
բազմամյա տունկերի հարկվող յեկամուտը հաշվարկ-  
վում է միայն պտուղ տվող հասակի տունկերով բունը-  
ված տարածությունից:

§ 50. Հաշվի են առնվում տնտեսության ունեցած  
բոլոր խոտհարքները՝ ջրովի, անջրղի և անտառային:

Հաշվի են առնվում միայն այն խոտհարքները, վոր-  
ոնք մշտապես ողտաղործվում են տնտեսության կող-  
մից վորպես խոտհարքներ:

Այն հողամասերը, վորոնք ծածկված են թփերով  
կամ անտառով, հարկվում են վորպես խոտհարքներ

միայն այն մասերով, վորոնք փաստորեն հնձվում են: Չեն հարկվում ճահճային խոտհարքները, վորոնց խոտը անասունի կերի համար անպետք է:

### ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՅՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏԸ ՎՈՐՈՇԵ- ԼՈՒ ԿԱՐԳԸ

57 հոդ.— Անասուններից ստացվող յեկամուտը վորոշելիս, հաշվի յեն անվում՝

ա) յերեք տարեկան և 3 տարեկանից մեծ ձիերը, յեղները, գոմեշները, եշերը, ջրբինները և 4 տարեկանից մեծ ուղտերը.

բ) կովերը, առաջին ծնից հետո և յերեք տարեկանից մեծ յերինջները:

գ) յերեք տարեկանից մեծ ցուլերը.

դ) ձմեռած վոչխարները և այծերը.

Անասունների տարիքը վորոշվում է առ մեկը մայիսի 1935 թ.:

### ՎՈՉ-ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՎՈՐՈ- ՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

58 հոդ.— Վոչ գյուղատնտեսական յեկամուտները հաշվի են անվում 1934 թ. հունվարի մեկից մինչև դեկտեմբերի 31-ը ժամանակամիջոցում ստացված գումարի չափով:

§ 51. 1934 թ. ստացած վոչ-գյուղատնտեսական յեկամուտները մտցվում են հարկվող յեկամտի մեջնակ այն դեպքում, յեթե տնտեսությունը 1935 թ. նման վաստակներ չունի:

59 հոդ.— Վոչ-գյուղատնտեսական յեկամտի չափը յուրաքանչյուր տնտեսության համար վորոշվում է գյուղխորհուրդների կողմից և հաստատվում է չրջանային հարկային հանձնաժողովների կողմից:

Այդ դեպքում ընդհանուր յեկամտից հանվում են գրադմունքի հետ կապված հիմնական արտադրական ծախքերը (հումքի, կիսաֆարրիկատների, վառելանյութերի և այլ ծախքերը): Այդպիսով վորոշված յե-

կամուտը մտցվում է տնտեսության հարկվող յեկամտի մեջ հետևյալ չափերով:

1. Շենքեր և այլ դույք վարձով տալուց և ջրադացներից 100 0/0:

2. Փոխադրական գրադմունքից, կոշկակարությունից, դարձնությունից, պայտառությունից և ժամագործությունից 75 0/0:

3. Դերձակությունից, վարսավիրությունից և հյուանությունից 60 0/0:

4. Քարհատությունից, բրուտությունից, գորգագործությունից, աղյուս կամ կղմինդր պատրաստելուց և այլ գրադմունքից 50 0/0:

Անտառամշակման (անտառահատում, անաուփոխադրում և այլն) և տորֆամշակման աշխատանքի համար ստացված յեկամուտներն ամենուրեք ավելացվում են տնտեսության մյուս հարկվող յեկամուտներին 20 0/0-ի չափով:

Կոոպերացված տնայնագործների ու արհեստավորների այն յեկամուտները, վորոնք ստացվում են իրենց արտադրանքն արտելին հանձնելուց, չեն յենթարկվում գյուղատնտեսական հարկի, այլ յենթարկվում են յեկամտային հարկի, այն կարգով, վորը սահմանված է աշխատավարձի հարկման համար: Իսկ կոոպերացված տնայնագործների և արհեստավորների այն յեկամուտները, վորոնք ստացվում են իրենց արտադրանքն արտելից դուրս վաճառելուց, միացվում են տնտեսության գյուղատնտեսական հարկի յենթակա յեկամտին չկոոպերացված տնայնագործների յեկամուտների հետ հավասար հիմունքներով:

60 հոդ.— Արգելվում է անհատական կարգով հարկի յենթարկել, յեթե չկան այլ այնպիսի հատկանիշներ, վորոնք հիմք են ծառայում տնտեսությունը կուլակային տնտեսությունների կարգը դասելու համար, այն տնայնագործներին ու արհեստավորներին՝

ա) վորոնք իրենց գրադմունքի ասպարիզում վարձու աշխատանք են գործադրում, այն դեպքում, յերբ դրանով նրանք չեն զրկվում ընտրական իրավունքներից:

բ) վորոնք իրենց զբաղմունքի ասպարիզում գործադրում են մեքենայական շարժիչներ, բացի աղայներից, ձիթհաններից, գլորաններից, դինդերից այն դեպքում, յերբ զբաղմունքը կատարվում է առանց վարձու աշխատանքի:

§ 52. Վոչ-գյուղատնտեսական ընդհանուր յեկամուտների մեջ մտցվում է սեփական արտագրության առարկաների և ապրանքների վաճառքի արժեքը, ուրիշի մթերքները կամ նյութերը վերամշակելու համար ստացած վարձատրությունը, փոխադրական արհեստի ամբողջ փաստակը, շենքերը վարձով տալուց ստացած յեկամուտները:

Բնամթերքով ստացած վոչ գյուղատնտեսական յեկամտի (հացահատիկով, կարտոֆիլով, մանուֆակտուրայով և այլն) գնահատումը կատարվում է շուկայի գներով:

§ 53. Վոչ-գյուղատնտեսական յեկամուտները վորոշելու ժամանակ, հանմում են արտագրական ծախքերի հումքի, գնված փառեյանյութի արժեքը, հատուկ շենք և արտագրական կահավորում վարձելու ծախքը և անտառամշակության և տորֆամշակության վոչ-գյուղատնտեսական արհեստում զբաղված բանող ձիերի համար գնած կեռի արժեքը:

§ 54. Հիմնարկություններում և յինարարություններում պայմանագրերով սիստեմատիկոտեն աշխատող գրաբառները (այսինքն այն անձինք, վորոնք կատարում են հողային աշխատանքներ իրենց ձիերով և ինվենտարով), յեթե նրանք արհեստագործական արտելների անդամներ չեն, յենթակա յեն յեկամտահարկի այդ ձեռնարկություններում բանվորների և ծառայողների համար սահմանված դրույքներով: Այդ նույն անձնավորություններին գյուղհարկի յենթարկելու դեպքում վերահիշյալ վաստակները հաշվի չեն առնվում:

§ 55. Երջֆինրաժինները և գյուղխորհուրդները պարտավոր են հավաքել պետական և կոոպերատիվ կազմակերպություններում տեղեկություններ այն դումարների մասին (թե դրամով և թե բնամթերքով), վորոնք

վճարված են առանձին մենատնտեսներին: Հավաքված այդ տեղեկությունները վճարված դումարների մասին շրջֆինրաժինները պետք է հայտնեն համապատասխան գյուղխորհուրդներին:

§ 56. Վոչ-գյուղատնտեսական վաստակների հաշվառման արդյունքները դրանցվում են հատուկ ցուցակի մեջ (գյուղխորհուրդները հաշվ. ձև № 24): Գյուղխորհուրդը այդ ցուցակը մեկ որինակից ուղարկում է շրջանային հարկային հանձնաժողովին, վերջինը ստուգում է գյուղխորհրդի հաշվարկները, կատարում է ցուցակի մեջ բոլոր անհրաժեշտ ուղղումները և հաստատում է ամեն մի տնտեսության յեկամտի չափը:

**ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒԹ ՍՏԱՑԱԾ ՅԵԿԱՄՏԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ**

61 Հոդ. Եուկայում գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց աշխատավոր մենատնտեսների ստացած յեկամուտը, հաշվի յե առնվում 1934 թ. գյուղատնտեսական հարկի հաշվառումից, մինչև 1935 թվի հաշվառման ժամանակամիջոցում գոյացած գումարի չափով:

Եուկայում գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց տնտեսության ստացած յեկամտի չափը, վորոշում են գյուղխորհուրդները և հաստատում են շրջանային գործադիր կոմիտեները:

Շրջանային գործադիր կոմիտեների կողմից հաստատված այդ յեկամուտը միացվում է տնտեսության հարկի յենթակա մյուս յեկամուտներին 50 տոկոսից մինչև 75 տոկոսի չափով:

Առանձին շրջաններում շուկայում գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց ստացած յեկամուտները միացվում են տնտեսության հարկի յենթակա մյուս յեկամուտներին հետևյալ չափերով:

- Շրջաններ
- |  |     |        |
|--|-----|--------|
|  | 0/0 | 0/0    |
| 1. Աբարան, Արթիկ, Ախտա, Ն.-Բայազետ, Միկոյան Բառարգեչար, Գորիս, Ղափան, Մարտունի, Մեղրի, Ազիզբեկով, Ծամշադին, Իջևան, Սիսյան ու Թալին |     | 50 0/0 |

- 2. Ամասիա, Ալլահաբերդի, Գիլիշան, Կիրովահան, Կոսալք, Լենինական, Աշտարակ, Ստեփանավան, Վեդի 60 0/0
- 3. Ղամարլու, Հոկտեմբերյան, Վաղարշապատ և Յերևան 70 0/0

Շրջանային գործադիր կոմիտեները սահմանում են այդ յեկամուտների հարկման յենթակա չափը (տուկտը) առանձին գյուղերի համար 50-75 տոկոսի սահմաններում:

62 հոդ. Հացահատիկը և գյուղատնտեսական այլ մթերքները կոոպերացիային վաճառելուց ստացած յեկամուտները հարկի չեն յենթարկվում:

§ 57. Շրջանային հարկային հանձնաժողովներին իրավունք է վերապահվում այդ յեկամուտները հարկի չյենթարկել այն դեպքում, յերբ մթերքների վաճառքը գյուղայում կրում է պատահական բնույթ և այդ յեկամուտի գումարը աննչան է (որինակ 4)-50 ոտը.):

§ 58. Շուկայում գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց ստացված յեկամուտները վորոշելու ժամանակ, հաշվի յեն առնվում գյուղատնտեսության բոր մթերքների վաճառքից ստացած յեկամուտները, նույն թվում և այնպիսիները, վորոնք յեկամտաբերության նորմաներով չեն հարկվում (թուչուններ, խոզեր, փայտ և այլն) բացի 62-րդ հոդվածում մատնանշված յեկամուտներից, այսինքն հացի և այլ մթերքների վաճառքից կոոպերացիային:

§ 59. Հաշվի յեն առնվում վոչ միայն մթերատու անասունների, այլ և բանող անասունների և մատղաշների վաճառքից ստացած յեկամուտները:

§ 60. Յեթե տնտեսությունն անասուն է վաճառում խմբակային մսամթերման հանձնում կաղմակերպելու նպատակով, ըստ վորում անասունի վաճառքն այդ նպատակով հաստված է գյուղխորհրդի կողմից, ապա նման վաճառքի յեկամուտները հաշվի չեն առնվում:

63 հոդ. Շուկայում գյուղատնտեսական մթերքները վաճառելուց տնտեսության ստացած յեկամտի չափը

վորոշում է գյուղխորհրդը և հաստատում է չրջանային հարկային հանձնաժողովը:

§ 61. Շուկայում գյուղատնտեսական մթերքներ վաճառելուց յեկամուտներ ունեցող տնտեսությունների հայտնաբերումը և այդ յեկամուտների չափերի վորոշումը կատարում է գյուղխորհրդի պլենումը:

§ 63. Շուկայում գյուղատնտեսական մթերքները վաճառելուց ստացած յեկամուտների հաշվառման արդյունքները գրանցվում են հատուկ ցուցակի մեջ (գյուղխորհրդերի հաշվառման ձև 25): Այս ցուցակի մեկ որինակը գյուղխորհրդը ուղարկում է չրջանային հարկային հանձնաժողովին, վորը ստուգում է գյուղական հարկային հանձնաժողովի հաշվարկները, կատարում է ցուցակի մեջ բոլոր անհրաժեշտ ուղղումները և հաստատում է ամեն մի տնտեսության յեկամտի չափը:

**Գ. ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

64 հոդ. Աշխատավոր մենատնտեսների հարկը հաշվարկվում է դրույքների հետևյալ աղյուսակով:

Տնտեսության նորմատիվ կարգով հաշվարկված յեկամտի չափը		Գյուղհարկի չափը	Տնտեսության նորմատիվ կարգով հաշվարկված յեկամտի չափը		Գյուղհարկի չափը
Մինչև 100	ն.	15	426—	450	73
101—	125	17	451—	475	81
126—	150	20	476—	500	89
151—	175	24	501—	525	97
176—	200	28	526—	550	105
201—	225	32	551—	575	113
226—	250	36	576—	600	121
251—	275	40	601—	625	129
276—	300	44	626—	650	137
301—	325	48	651—	675	145
326—	350	52	676—	700	154
351—	375	56	701—	725	164
376—	400	60	726—	750	174
401—	425	66	751—	775	185

801—1000 ռ—200 ռ + 40 կ.	800 ռ	վեր յեկամուտի յուրաքանչյուր ուսերուց
1000—2000 ռ—280 ռ+44 կ.	1000 ռ	» » » » » » »
2000—3000 ռ—720 ռ+48 կ.	2000 ռ	» » » » » » »
3000—ավելի —1200 ռ+55 կ.	3000 ռ	» » » » » » »

65 հոդ. Բոլոր դեպքերում մենատնտեսի հարկը պետք է առնվազն 25 0/0 բարձր լինի կոլտնտեսականների հարկի այն դրույքից, վորը սահմանված է տրվյալ դյուղի կոլտնտեսականների համար:

§ 63. Մենատնտեսների վճարման յենթակա գյուղահարկի դրույքը բոլոր դեպքերում անկախ սրտոնություններից, փաստորեն պետք է բարձր լինի առնվազն 25 տոկոսով կոլտնտեսականների հարկի այն առավելագույն դրույքից, վորը սահմանված է տվյալ դյուղի կոլտնտեսականների համար:

Որինակ՝ մենատնտեսի գյուղահարկը հաշված է 32 ռ.: Յենթադրենք այս տնտեսությանը տրված է անաշխատունակների համար 10 տոկոս զեղչ: Մնում է վճարելու 28 ռ. 80 կ.: Այնուհետև յենթադրենք վոր տվյալ գյուղում տնամերձ հողամասեր ունեցող կոլտնտեսականների համար գյուղահարկի դրույքը սահմանված է 28 ուսերի:

Նկատի ունենալով այն, վոր ըստ որենքի մենատնտեսի գյուղահարկը պետք է առնվազն 25 տոկոս բարձր լինի տնամերձ ցանքեր ունեցող կոլտնտեսականների հարկի առավելագույն այն դրույքից, վորը սահմանված է տվյալ դյուղի համար, որինակում բերված մենատնտեսը հարկ պիտի վճարի վոչ թե 28 ռ. 80 կ. այլ 35 ուսեր:

66 հոդ. Այն տնտեսություններին, վորոնց կազմում կան 2-ից վոչ ավելի աշխատունակ անդամ, ընտանիքի անաշխատունակ անդամների համար հաշվարկված հարկից զեղչ է տրվում հետևյալ չափով՝ յերեք անաշխատունակ անդամ ունեցողներին— 10 տոկոս, չորս և ավելի անաշխատունակ անդամ ունեցողներին 20 տոկոս:

§ 64. 66-րդ հոդվածի կարգով տնտեսությանը զեղչ

տալու խնդիրը վորոչելու ժամանակ անաշխատունակությունը վորոչվում է հասակով: Անաշխատունակ են համարվում 1) բացարձակ հաշմանդամները, վորոնք չեն կարող մասնակցել դաշտային աշխատանքներին, 2) մինչև 16 տարեկան հասակ ունեցողները, 3) 60 տարեկանից վեր տղամարդիկ և 55 տարեկանից վեր կանայք, 4) հաշմանդամություն 1, 2 և 3-րդ խմբերին պատկանող պատերազմի և աշխատանքի հաշմանդամները: 3 և ավելի աշխատունակներ ունեցող տնտեսություններին անկախ անաշխատունակների թվից 66-րդ հոդվածի կարգով զեղչ է տրվում:

Աշխատունակների թիվը հաշվելիս, նկատի չեն առնվում կարմիր Բանակում գտնվողները: Որինակ, յեթե տնտեսությունն ունի 3 աշխատունակ անդամներ, վորոնցից մեկը գտնվում է կարմիր Բանակում, նա 66-րդ հոդ. նախատեսված արտոնությունը ստանալու իրավունքից չի զրկվում:

§ 65. Անաշխատունակության զեղչերը, ինչպես և մյուս բոլոր արտոնությունները չեն տրվում՝ չարամտորեն ցանքի պլանը և գյուղատնտեսական մթերքները պետությանը հանձնելու պարտադիր պարտավորությունները չկատարող տնտեսություններին (հոդ. 67) անհատական կարգով հարկվող տնտեսություններին (հոդ. 95), ապակուլակացված տնտեսություններին, (հոդ. 102), ընտրական իրավունքներից զրկված անձանց տնտեսություններին (հոդ. 103) և կոլտնտեսություններից վտարված տնտեսություններին:

67 հոդ.— Այն տնտեսությունները, վորոնք չարամտորեն չեն կատարում ցանքի և պետությանը պարտադիր կարգով գյուղատնտեսական մթերքներ հանձնելու պլանները, գյուղատնտեսական հարկի յեն յենթարկվում ընդհանուր հիմունքներով, իսկ նրանցից զանձվելիք հարկի դումարը կրկնապատկվում է:

Այդ տնտեսությունները գյուղատնտեսական հարկից վոչ մի արտոնություն չեն ստանում (նույն թվում և 66 հոդվածով տրվող զեղչը):

Այդ տնտեսությունների ցուցակը հաստատում են չրջանային գործադիր կոմիտեները:

§ 66. 67-րդ հոդվածի կարգով հարկվում են այն տնտեսութունները, վորոնք չարամտորեն չեն կատարում 1934 թ. աշնան և 1935 թ. գարնան ցանքի պլանները, կամ գյուղատնտեսական միջերջները պետութայնը հանձնելու պարտադիր (հարկի ուժ ունեցող) 1935 թ. հետևյալ առաջադրանքները՝ 1) հացահատիկային մշակութիւնների, բրնձի, արևածաղկի, քնյիթի, 2) կարտոֆիլի, 3) կաթի և յուղի 4) մսի, 5) բրդի:

§ 67. 67-րդ հոդվածի կարգով հարկվող տնտեսութունների ցուցակներն անպայման պետք է քննարկվեն և ստուգվեն գյուղխորհրդի պլենումում: Վերջնականապես հաստատվում են այդ ցուցակները շրջանային գործադիր կոմիտեների կողմից:

#### Գ. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻՆ

#### ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱԿԱՎԱԶՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

68 հոդ.— Շրջանային գործադիր կոմիտեները գյուղխորհուրդների ցուցակներով կարող են սակավանակի չափով այն աշխատավոր մենատնտեսներին, վորոնք չունեն խոշոր յեղջուրավոր անասուններ, ինչպես և ընտանիքի աշխատունակ անդամներ:

§ 68 Գյուղխորհուրդների կազմած՝ այդպիսի տնտեսութունների ցուցակները, նախքան շրջգործկոմին ի հաստատութուն ներկայացնելը, պետք է քննութայն առնվեն գյուղխորհուրդների պլենումներում:

#### ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

69 հոդ.— Գյուղատնտեսական հարկի չեն յենթարկվում այն բանվորներն ու ծառայողները, վորոնք գյուղատնտեսութայնը են պարապում տնամերձ հողամասում և ունեն միայն մի կով, մանր անասուն, խոտ-

հարք, բայց չունեն դաշտային հող ու լճկան անասուն, յեթե նրանց յեկամտի հիմնական աղբյուրն աշխատավարձն է:

Այն հողամասերը, վորոնք հատկացվում են բանվորներին ու ծառայողներին՝ բանջարանոցները և կարտոֆիլի համար, նույնպես չեն յենթարկվում գյուղատնտեսական հարկի:

§ 69. Բանվորներին ու ծառայողներին պատկանող տնտեսութուններն ուղտվում են 69-րդ հոդվածի կարգով սահմանված արտոնութայնը այն դեպքում, յեթե բանվորներն ու ծառայողները պետական հիմնարկութայն կամ ձեռնարկութայն (նույն թվում կոոպերատիվ և հասարակական կազմակերպութայն) մեջ մշտական աշխատանքի են մտել 1934 թ. հունվարի 1-ից վոչ ուչ և միևնույն ժամանակ հացահատիկային ցանքով բռնված հողամասեր չունեն ու դաշտային ցանքի առաջադրանքներ չեն ստացել:

Այս արտոնութունը տրվում է անկախ նրանից, յե վորտեղ է գտնվում ոժանդակ գյուղատնտեսութունը, ձեռնարկութայն կամ հիմնարկութայն վայրում, վորտեղ մշտական աշխատում է ընտանիքի գլխավոր անդամը, վորին պատկանում է ոժանդակ տնտեսութունը, յե նրա կողմից խնամվողների բնակատեղում:

§ 70. Բանվորների և ծառայողների համար 69-րդ հոդվածով նախատեսված արտոնութունը տարածվում է այն անձանց տնտեսութունների վրա, վորոնք կենսաթոշակ են ստանում վորպես պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ:

Կոոպերացված տնայնագործների (բացի պատերազմի հաշմանդամների տնտեսութուններից) վրա այս արտոնութունը չի տարածվում:

§ 71. Գյուղհարկից լրիվ կամ մասնակի չափով ազատվում են անտառային այն պահակները, վորոնք բնակվում են պահպանվող անտառամասերում: Այդ արտոնութունը տրվում է անտառապահներին այն դեպքում, յեթե նրանք ունեն վոչ ավելի քան մեկ կով, մեկ ձի, մանր անասուններ և անտառում հատկացրած հո-

դամասեր, յեթե միայն անտառապահների այդ կատեգորիան գյուղում (անտառից դուրս) բ՛լլորովին գյուղատնտեսութուն չունի:

70 հոդ.— Հարկից ազատվում են այն անձանց տնտեսութունները, վորոնք առնվազն մի տարով կոնտրակտացիա յեն կնքել, կամ իրենց ամրացրել են ածխաարդյունաբերության ստորյերկրյա աշխատանք կատարելու համար:

Իրենց պարտականությունները չկատարելու դեպքում, նրանց տնտեսութուններից հարկը գանձվում է ընդհանուր հիմունքներով:

§ 72 Արտոնություններ ստանալու համար, անհրաժեշտ է ներկայացնել գյուղխորհրդին տեղեկանք աշխատանքի վայրից այն մասին, վոր ընտանիքի գլխավորը (աշխատունակ հիմնական աշխատողը) կոնտրակտացիայի յե յենթարկվել, կամ ինքն ամրացվել է ածխային արդյունաբերության մեջ ստորյերկրյա աշխատանքների համար:

Տնտեսութունն ազատվում է գյուղհարկի միայն այն մասից, վորի վճարման ժամկետը չի լրացել ածխաարդյունաբերության մեջ ստորյերկրյա աշխատանքի անցնելու պահին:

71 հոդ.— Հարկից ազատվում են յերկաթուղային, ջրային, խճուղային և գրունտային տրանսպորտի գծային աշխատողների այն յեկամուտները, վորոնք ստացվում են տրանսպորտին հատկացված հողերում գտնվող գյուղատնտեսական բոլոր տեսակի աղբյուրներից:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐՈՒՄ

72 հոդ.— Գյուղհարկից ազատվում են այն մենատնտեսների տնտեսութունները, վորոնց գլխավորը (աշխատունակ հիմնական անդամը) աշխատավորական պայմանագրերով, անցել է խորհրդային տնտեսություններում մշտական աշխատանքի, իսկ ընտանիքի մյուս աշխատունակ անդամներն աշխատայմանագրեր են

կնքել խորհրտնտեսության հետ սեզոնային աշխատանքներ կատարելու համար: Այս արտոնությունը տրվում է միայն այն տնտեսություններին, վորոնք խորհրտնտեսության աշխատանքի անցնելու պատճառով չեն ստացել ցանքի պլանային առաջադրանքներ և ազատված են հացահատիկ, արևածաղիկ, կարտոֆիլ և չալթուկ պտուտությանը հանձնելու պարտավորությունից:

§ 73. Մենատնտեսների կողմից խորհրտնտեսության հետ կնքված պայմանագիրը խախտելու դեպքում, հարկը գանձվում է ընդհանուր հիմունքներով:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՈՒ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԸ ՅԵՎ ԽՈՏԱՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

73 հոդ.— Ծաքարի ճակնդեղի ցանքերը լիովին ազատվում են հարկից:

74 հոդ.— Հարկից լիովին ազատվում են կանեփի կոնտրակտացիայի յենթարկված ցանքերը, ինչպես և թեխտու վուշի այն բոլոր ցանքերը, վորոնք կատարվել են առվճարից հետո, աշնանավար խամ հողերում: Վուշի մյուս ցանքերը հարկի յեն յենթարկվում արտոնյալ նորմայով, այն է՝ հացաբույսերի նորմայով:

75 հոդ.— Հարկից լիովին ազատվում են՝  
ա) բամբակի այն ցանքերը, վորոնք կատարվել են նոր շրջաններում (Ուկրայինայում, Հյուսիսային Կովկասում, Ազով-Սեվծովյան յերկրում, Դաղստանում, Ղրիմում և Ստալինգրադի յերկրում:

բ) վոռոգվող հողագործության բոլոր շրջանների անջրդե հողերում կատարված բամբակի ցանքերը:

Բամբակի մյուս ցանքերը հարկի յեն յենթարկվում արտոնյալ նորմայով, այն է՝ հատիկային բույսերի նորմայով:

§ 74. ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի և Համ ԿԿ(բ)Կ 1935 թ. մարտի 7-ի վորոշման 12-րդ հոդ. համաձայն (վորոշում «1935 թ. բամբակ-հումքի բերքը կոնտրակտացիայի յենթարկելու մասին») բամբակ ցանող մենատնտեսներից:

տնտեսների 1935 թ. և 1936 թ. դյուղհարկի դրույքներն իջեցվում են 50 0/0-ով:

76 հոդ.— Հարկից լիովին ազատվում են ցիտրուսային տունկերը, քենդիրի, կենաֆի, ռամիի, կանատնիկի, պերիլի, դենագերչակի, արախիսի, քնջիթի, լյուֆայի ցանքերը, ինչպես կոնտրակտացիայի յենթարկված գայլուկի և յեթերա-յուղատու, դեղատուտեխնիկական բույսերի տարածությունները:

Հարկից լրիվ ազատվում են զնդածաղկի այն տունկերը, վորոնք կատարված են աշնանավար հողամասերում, յեթե միայն կիրառվում են ագրոտեխնիկական կանոններ:

77 հոդ.— Մենատնտեսների չալթուկի ցանքերն ամենուրեք յենթարկվում են դյուղհարկի:

78 հոդ.— Հարկից բոլորովին ազատվում են աուվուլտի այն ցանքերը, վորոնք փաստորեն թողնվել են սերմացվի համար, ինչպես և լյուպինի ու այլ մշակույթների այն ցանքերը, վորոնք հերկվում են վորպես պարարտանյութ:

ԿԵՆՏԱՆԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹՈՒՉԱՐՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

79 հոդ.— 1934 թ. հետ համեմատած տնտեսության մեջ կովերի, մատակների, ցուլերի ու վոչխարների հոտի վողջ աճն ազատվում է հարկից:

80 հոդ.— Հարկից ազատվում են կարակուլի ցեղի վոչխարները և նրանց մետիսները (խառնուրդները):

81 հոդ.— Հարկումից ազատվում են խոզերը, թըռչունները և ճաղարները:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՑ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ, ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐ ՅԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐ

82 հոդ.— Արտոնություններ են տրվում այն տնտեսություններին, վորոնց կազմի մեջ մտնում են:

ա) Խորհրդային Միության հերոսներ, Խորհրդային Միության շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգնատրվածներ և աշխատանքի հերոսներ:

բ) հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ աստիճանի պատկանող պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ:

Վերև թվարկված տնտեսությունները հաշված հարկից ստանում են 20 ռուբլի զեղչ, յեթե տնտեսության մեջ կան աշխատունակ այլ տղամարդիկ, և 30 ռուբլի զեղչ, յեթե տնտեսության մեջ չկան այլ աշխատունակ տղամարդիկ:

Յեթե տնտեսության մեջ կան այս հոդվածում թվարկված կատեգորիաներին պատկանող մի քանի անձինք, ապա արտոնությունը տրվում է ամեն մի անձին առանձին:

§ 75. 82-րդ հոդ. «բ» կետի կարգով սահմանված արտոնություններով ոգտվում են միայն այն տնտեսությունները, վորոնց զլխավորը հանդիսանում է պատերազմի կամ աշխատանքի հաշմանդամ և ունի սոցապի կամ սոցապահության մարմինների կողմից տրված վկայական հաշմանդամության մասին: Այդ տեղեկանքների ներկայացումը պարտադիր է այն զեպքում, յեթե չկան հաշմանդամության ակնհայտ ցուցանիշներ:

83 հոդ.— Այն տնտեսությունների համար, վորոնց կազմի մեջ մտնում են այնպիսի զինվորականներ և պահեստի զինապարտներ, վորոնք կանչվել են նրանց համար սահմանված ուսման ու հավաքի, հարկի այն մասի մուծումը, վորը վճարելու ժամկետը զուգադրվում է ուսման կամ հավաքի ժամանակին, հետաձգվում է մի ամսով, հաշված նրա վերադառնալու օրից:

84 հոդ.— Վերացված է:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱԲՆԱԿՆԵՐԻՆ

85 հոդ.— Այն մենատնտեսները, վորոնք վերաբնակվել են պլանային կարգով մինչև 1930 թ. ապրիլի

1-ը Հեռավոր Արևելքի Յերկիրը, Կարելիայում և Մուր-  
մանի շրջանում, հարկից ազատվում են տասը տարի  
ժամանակով:

86 հոդ.— Այն մենատնտեսները, վորոնք պլանային  
կարգով վերաբնակվել են 1930 թ. ապրիլի մեկից հե-  
տո, արտոնություններ են ստանում այն հատուկ վորո-  
շումների հիման վրա, վորոնք հրատարակվում են  
ԽՍՀՄ Ժողկոմխորհին կից Համամիութենական Վերա-  
բնակեցման Կոմիտեյի կողմից ԽՍՀՄ Ֆինանսների Ժո-  
ղովրդական Կոմիտարիատի հետ մասին:

§ 76. 1930 թ.— 1934 թ.վերի ընթացքում պլանային  
կարգով վերաբնակված մենատնտեսները շարունակում  
են ոգտվել արտոնություններով այնքան ժամանակ,  
վորքան սահմանվել է նրանց համար տեղափոխելու  
պահին:

### ԱՅԼ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

87 հոդ. Վերացված է:

88 հոդ.— Վոսկու և պլատինի հանքեր վորոնոջ  
անձանց վորոշյալառատեսական վաստակները ազատ-  
վում են հարկից:

§ 77. Վոսկի վորոնոզների տնտեսություններն ա-  
զատվում են գյուղհարկի այն մասից միայն, վորի վճար-  
ման ժամկետները վորոնելու աշխատանքներին անցնելու  
պահին դեռ չի լրացել:

89 հոդ. Հարկից ազատվում է այն յեկամուտը, վոր  
ստացվում է՝

ա) սունկ, ամեն տեսակ վայրի պտուղներ (սերմնա-  
վոր ու կորիզավոր յեղենակաղին ու հաճար, շագանակ,  
վայրի կաղին, ինչպես և վայրի հատապտուղներ)  
հավաքելուց:

բ) ուտիլ հումք և մետաղի շարքված կտորներ (լոմ)  
հավաքելուց.

գ) խեժ հավաքելուց.

Այդ արտոնությունը տրվում է այն դեպքում, յեթե  
ամբողջ հավաքածը անայայման հանձնվում է պետական  
կամ կոոպերատիվ կազմակերպություններին:

§ 78. Հարկումից ազատվում է վայրի դեղա-տեխ-  
նիկական բույսեր հավաքելուց ստացած յեկամուտները,  
յեթե այդ բույսերը հավաքվում են բացառապես պե-  
տական և կոոպերատիվ կազմակերպությունների հա-  
մար:

90 հոդ.— Այն տնտեսությունները, վորոնք տուժել  
են տարրերային աղետներից, շրջանային հարկային  
հանձնաժողովների վորոշմամբ ազատվում են հարկից  
բոլորովին կամ մասամբ՝ նայած տնտեսության կրած  
վնասի չափին և տնտեսության կարողությանը:

§ 79. Տարրերային աղետի հետևանքով հարկից  
զեղչ կատարելու մասին հարկային հանձնաժողովի վո-  
րոշումը չի կարող հիմք ծառայել պետական այլ պար-  
տավորությունների նկատմամբ ևս արտոնություն տա-  
լու համար:

§ 80. Տարրերային աղետի հետևանքով արտոնու-  
թյուններ տալու և զեղչի չափը վորոշելու համար հիմք  
պետք է ծառայեն շրջանային առահովադրական հանձ-  
նաժողովների արձանագրությունները (ապահովագրո-  
վողի որչեպտների նկատմամբ), գյուղխորհուրդների  
վորոշումները և այլ ստուգված նյութերը, վո-  
յեգրակացությունները և այլ ստուգված նյութերը, վո-  
րոնք հաստատում են տարրերային աղետի անմիճելիու-  
թյունը, նրա չափերը և իսկական պատճառները (այ-  
թյունը, նրա չափերը և իսկական պատճառները (այ-  
սինքն արու՞ք տվյալ աղետը տեղի յե ունեոել տնտե-  
սություններից անկախ պատճառներով, յե՞ գուրը  
պահասանելու վերաբերյալ անհրաժեշտ միջոցներ ձեռք  
չառնելու և բացահայտ անտնտեսարության հետևանք  
ներքին և արտաքին գործերում, յերբ ա-  
նկալում են կոլլեկտիվները կողմից մերժվում է  
պահովագրական մարմինների կողմից մերժվում է  
տվյալ աղետի համար վարձատրությունը—հարկային  
արտոնություն ևս չի տրվում:

91 հոդ. Հարկից բոլորովին ազատվում են գյուղա-  
կան այն ակտիվիստների ընտանիքները, վորոնք տու-  
ժել են կոլլեկտիվներին վրեժխնդրությունից՝ գյուղի սո-  
ցիալիստական վերակառուցման և հանրային սեփակա-  
ցիկության սաշտպանության համար մղվող պայքարում:  
նության սաշտպանության համար մղվող պայքարում:

92 հոդ.— Հարկից բոլորովին ազատվում են ան-

տառի այն աշխատողներին ընտանիքները, վորոնք սպանվել են պետական գույքը պահպանելու ժամանակ իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, կամ այդ կապակցութեամբ:

93 հոդ.—Վերացված է:

**ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

94 հոդ.— Աշխատավոր մենատնտեսները հարկը վճարում են այն ժամկետներին, վորոնք սահմանված են կոլտնտեսականների համար (45 և 46 հոդվածներ):

§ 81. Մենատնտեսների հարկը հաշվարկվում է առանձին ոժանդակ ցուցակներում (գյուղխորհ. հաշվառման ձև № 2/2 բ) և արդյունքները գրանցվում են մենատնտեսների տնտեսությունների գրքի 13-րդ հատվածում: Վճարման ծանուցագիրը (գյուղխ. հաշվառման ձև № 20-բ) պետք է ստորագրված լինեն գյուղխորհրդի նախագահի կողմից և հանձնվեն յուրաքանչյուր տնտեսությանը վճարման սահմանված ժամկետից առնվազն 10 օր առաջ:

**ՀԱՏՎԱԾ 5.**

**ԿՈՒԼԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ**

95 հոդ.— Բոլոր կուլակային տնտեսությունները հարկվում են իրենց իրական յեկամուտների համաձայն, անհատական կարգով, այլ վոչ նորմաներով և վոչ մի արտոնություն չեն ստանում:

96 հոդ.— Տնտեսությունները կուլակային են համարվում և անհատական կարգով հարկման յենթարկվում հետևյալ հատկանիշներից վորևե մեկի առկայության դեպքում:

ա) Յեթե տնտեսությունը, սիստեմատիկորեն ըզբաղվում է չարաչահութեամբ (սպեկուլյացիայով—գրումներ, վաճառք) և այդ միջոցով հարստանում է բանվորների ու գյուղացիների հաշվին:

բ) Յեթե տնտեսությունը ստրկացուցիչ պայմաններով փող, կամ մթերքներ է տալիս փոխարինարար, պարտավորեցնելով փոխառուին վերադարձնել պարտքը փողով, բնանյութով, հումքով, կամ անձնական աշխատանքով և այլն (վաշխառություն):

գ) Յեթե տնտեսությունը սիստեմատիկորեն վարձու աշխատանք է կիրառում գյուղատնտեսության կամ տնայնագործության մեջ և ձեռնարկություններում, բացառութեամբ այն դեպքերի, յերբ վարձու աշխատանքի կիրառումը ըզխում է գյուղատնտեսական զանազան մշակույթների առանձնահատկությունից, կամ զբաղմունքի բնույթից ու չի գերազանցում բանվորական ուժ վարձելու առավելագույն չափից:

Բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը, վորն անհատական կարգով հարկելու հիմք չի ծառայում, բոլոր շրջանների համար սահմանվում է հետևյալ քանակութեամբ.

1. Հացահատիկային տնտեսությունների համար մինչև 50 վարձու աշխատանքային օր:
2. Սաղորդագործական տնտեսությունների համար մինչև 125 վարձու աշխատանքային օր:
3. Այգեգործական տնտեսությունների համար մինչև 75 վարձու աշխատանքային օր:
4. Բանջարաբուծական կամ չալթուկագործական տնտեսությունների համար մինչև 100 վարձու աշխատանքային օր:
5. Ծխախոտագործական տնտեսությունների համար մինչև 240 վարձու աշխատանքային օր:
6. Բամբակագործական տնտեսությունների համար մինչև 150 վարձու աշխատանքային օր:
7. Անասնապահական տնտեսությունների համար մեկ հովիվ կամ մեկ հոտաղ:

Արգելվում է անհատական կարգով հարկի յենթարկել տնայնագործներին ու արհեստավորներին, յեթե չըկան նրանց կուլակների շարքը դասելու այլ հատկանիշներ հետևյալ դեպքերում.

ա) յեթե արհեստի մեջ կիրառվում է վարձու աշ-

խատանք և բանվորի կամ աշակերտի առկայութիւնը հիմք չի ծառայում ընտրական իրավունքներից զրկելու համար:

բ) յեթե արհեստներում գործադրվում են մեքենայական շարժիչներ (բացի «գ» կետում մատնանշված ձեռնարկութիւններից), և այդ արհեստով զբաղվում են առանց վարձու աշխատանքի (60-րդ հոդված):

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.**— Վորերի, այրիների, հաշմանդամների և սովորողների տնտեսութիւններում վորտեղ չկան աշխատունակ տղամարդիկ կամ աշխատունակ տղամարդիկ ծանր հիվանդ են, գտնվում են կարմիր Բանակում, հանքագործներ են, կամ բանվորներ են և բացակայում են տնտեսութիւնից շինարարական աշխատանքների վրա աշխատելու պատճառով, մեկ մշտական վարձու բանվորի և սահմանված սեզոնային բանվորների որերի թվից վոչ ավելի աշխատանքի կիրառումը հատկանիշ չի ծառայում տնտեսութիւնն անհատական կարգով հարկելու համար: Նույն տնտեսութիւններում մեկ վարձու բանվորի բանվորական որերից ու սահմանված թվով սեզոնային բանվորների որերից վոչ ավելի աշխատանք կիրառելը ևս հատկանիշ չի ծառայում անհատական կարգով հարկելու համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.**— Յեթե անասնապահական տնտեսութիւնն ունի մեկ մշտական հովիվ, կամ հոտաղ և միաժամանակ ոգտագործում է սեզոնային 35 աշխատանքային որից ավելի, ապա այդ հանգամանքը հիմք է ծառայում տնտեսութիւնն անհատական կարգով հարկելու համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.**— Յեթե տնտեսութիւնը խառն մշակույթի բնույթ ունի, ապա բանվորական ուժ վարձելու առավելագույն չափը սահմանվում է տնտեսութիւնի հիմնական գյուղատնտեսական ճյուղի համար նախատեսված բանվորական որերի քանակի համեմատ:

գ) Յեթե տնտեսութիւնն ունի աղաց, ձիթհան, դինդ, նորմայով աշխատող ողու գործարան, կորեկաղաց, գզարան, կարտոֆիլի պտուղների և բանջարեղենի չորանոց, կամ այլ արդյունաբերական ձեռնարկութիւն, այն դեպքում, յերբ այդ ձեռնարկութիւնում մեքենայական շարժիչ է գործադրվում:

դ) Յեթե տնտեսութիւնն ունի նախորդ կետում թրված ձեռնարկութիւններից վորեւէ մեկը, վորն աշխատում է քամու կամ ջրի ուժով, այն դեպքում, յերբ ձեռնարկութիւնն տարեկան յեկամուտը 150 ու ավելի յե, իսկ ջրաղացինը 200 ու ավելի յե: Այդ գումարների չափով յեկամուտ ունեցող քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկութիւնները հիմք են ծառայում տնտեսութիւնն անհատական կարգով հարկելու համար, յերբ տնտեսութիւնն ընդհանուր յեկամուտը (գյուղատնտեսութիւնից և վոչ-գյուղատնտեսութիւնից) 700 ուրբուց ավելի յե:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.**— Նորմայով աշխատող ողու գործարանները հատկանիշ են ծառայում տնտեսութիւնն անհատական կարգով հարկելու համար նույնպէս այն դեպքերում, յերբ տնտեսութիւնն ողի քաշելու և վաճառելու նպատակով հումք է դնում անկախ այն բանից՝ գործադրվում է մեքենայական շարժիչ, թե վոչ, յեթե նրա տարեկան յեկամուտը բոլոր աղբյուրներից 700 ու պակաս չէ, իսկ ողու գործարանի յեկամուտը 150 ուրբուց ավելի յե:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.**— Յեթե քամու կամ ջրի ուժով աշխատող ձեռնարկութիւնը պատկանում է մի քանի տնտեսութիւնների (համատեբերի), ուրիշ հատկանիշների բացակայութիւնն ունի, այն տնտեսութիւնները, վորոնք ձեռնարկութիւնն իրենց պատկանող մասից տարեկան 150 ու ավելի յեկամուտ, իսկ ջրաղացից 200 ու ավելի յեկամուտ ունեն:

ե) Յեթե տնտեսութիւնն ունի արդյունաբերական այնպիսի ձեռնարկութիւն կամ զբաղմունք, վորի մի-

Ջոցով շահագործում է շրջակա բնակչութիւնը աշխատանքներ հանձնելով տներում կատարելու համար, կամ այդ ձեռնարկութիւնն ու սարքավորումը վարձով ե տալիս ստրկացուցիչ պայմաններով, շահագործում է բնակչութիւնը, գյուղատնտեսական միջերջներ այդ ձեռնարկութիւններում մշակելու միջոցով:

զ) Յեթե տնտեսութիւնը ստրկացուցիչ պայմաններով վարձակալում կամ վարձով է տալիս պտղատու կամ խաղողի այգիներ, խոտհարքներ և այլ գյուղատնտեսական հողամասեր:

յ) Յեթե տնտեսութիւնը վարձով է տալիս մեքենայական շարժիչ ունեցող բարդ գյուղատնտեսական մեքենաներ, կամ այդ մեքենաները վարձով աշխատեցնում է ուրիշ տնտեսութիւնների համար:

ը) Յեթե տնտեսութիւնը վարձով է տալիս առանձին շենքեր մասնատիրական ձեռնարկութիւնների համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.** — Արգելվում է այդ հատկանիշով անհատական կարգով հարկի յենթարկել այն բանվորներին ու ծառայողներին, վորոնք վորպես յեկամտի ոժանդակ աղբյուր ունեն փոքր գյուղական տնտեսութիւն, սեփական շենքեր, յեթե նրանց հիմնական վաստակը աշխատանքն է, կամ վարձու ծառայութիւնը:

թ) Յեթե տնտեսութիւնն անդամները պարապում են առևտրով, առևտրական միջնորդութիւնում կամ ունեն այլ անաշխատ յեկամուտներ, ինչպես և կրօնական պաշտամունքի ծառայողները, անկախ այդ աղբյուրներից ստացվող յեկամտի գումարից:

§ 82. Անհատական կարգով հարկման պետք է յենթարկվեն այն տնտեսութիւնները, վորոնք 1935 թ. ունեն կամ ունեցել են 1934 թ. այնպիսի հատկանիշներ, վորպիսիք թված են 96-րդ հոդվածում և հիմք են ծառայում կուլակայիներին շարքը դասելու համար:

§ 83. Այն տնտեսութիւնները, վորոնք 1935 թ. հարկային տարվա ընթացքում ձեռք կբերեն կուլակային հատկանիշներ, կամ վորոնց նկատմամբ կպարզվի, վոր

նրանք որչեկտներին հաշվառման ժամանակ, թագցրել են իրենց կուլակային հատկանիշները, հայտնաբերումից հետո անմիջապես պետք է հարկվեն անհատական կարգով:

97 հոդ. Գյուղխորհուրդները կազմում են անհատական կարգով հարկի յենթակա տնտեսութիւնների ցուցակը և վորոշում են նրանց յեկամտի չափը:

Այդ ցուցակները պետք է քննարկվեն կրտսնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ակտիվի ժողովներում:

Անհատական կարգով հարկի յենթարկվող տնտեսութիւնների ցուցակները և նրանց յեկամուտները վերջնականապես հաստատում են շրջանային գործադիր կոմիտեները, վորոնք պարտավոր են տեղում ստուգել, թե վորքան ճիշտ է անհատական հարկի յենթարկվել ամեն մի տնտեսութիւն:

98. հոդ. Անհատական կարգով հարկի յենթարկվելիք կուլակային տնտեսութիւններին յեկամուտները վորողելիս, հաշվի յեն առնվում և հարկվում են գյուղատնտեսութիւնն բոլոր աղբյուրներից ստացվող ներառյալ տնտեսութիւնն բոլոր աղբյուրների յեկամուտները, վորոնք նաև այնպիսի աղբյուրների յեկամուտները, վորոնք աշխատավորական տնտեսութիւններում հարկի չեն յենթարկվում (որինակ խոզաբուծութիւնից, թռչնատնտեսութիւնից և այլն) և վորչ գյուղատնտեսական բոլոր տեսակի վաստակներից:

Շուկայում վաճառվող միջերջներից ստացվող բոլոր յեկամուտները և վորչ-գյուղատնտեսական յեկամուտն ամբողջովին մտցվում են կուլակային տնտեսութիւնն հարկի յենթակա յեկամտի մեջ:

§ 84. Անհատական կարգով հարկի յենթակա ամեն մի տնտեսութիւնն համար պետք է լինեն այնպիսի նյութեր, վորոնցով փաստացի կբրպով կարելի յե հիմնա վորել այդ հարկումը: Այդ նպատակով գյուղխորհուրդները ոգտագործում են 1934 թ. անհատական կարգով յենթարկված տնտեսութիւնների ցուցակները, միլիցիայի հարկված տնտեսութիւնները, ընտրական իրավունքներից արձանագրութիւնները, հասարակական կազմազրկված անձանց ցուցակները, հասարակական կազմա-

կերպութիւնները նյութերը, վկաների ցուցմունքները և այլն: Անկախ այդ նյութերի առկայութեանից և լրիվ լինելուց, անհատական կարգով հարկման յենթակա ամեն մի տնտեսութեան խնդիրը անպայման պետք է քննութեան առնվի կողմնատեսականների և աշխատավորական մենատնտեսների ակտիվ ժողովում:

Միստեմատիկ սպեկուլյացիայի հատկանիշով անհատական կարգով հարկելու դեպքում, սիստեմատիկ սպեկուլյացիայի փաստը պետք է մանրագնին ստուգված և հաստատված լինի հիմնավորված նյութերով (միլիցիայի արձանագրութիւններով, վկայողների ցուցմունքներով և այլն):

§ 85. Կուլակային տնտեսութեան հարկվող յեկամուտը վորոշվում է տնտեսութեան մեջ յեղած բոլոր յեկամտի աղբյուրների հիման վրա, հաշվի առնելով բոլոր այն պայմանները, վորոնք բարձրացնում են այդ յեկամուտը (սպեկուլյատիվ գներով վաճառք և այլն):

§ 86. Շրջգործկոմի վորոշումները անհատական կարգով տնտեսութեանը հարկելու կամ վերացնելու մասին, ամեն մի առանձին տնտեսութեան վերաբերյալ պետք է լինի մանրամասնորեն պատճառաբանված:

99 հոդ. Անհատական կարգով հարկի յենթարկվող կուլակային տնտեսութեանների հարկի չափը հաշվում է դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն՝

Յեկամտի չափը	Հարկի չափը.
1000 ուր. ավելի մինչև 3000 ո.	350 ո. + 50 կ. — 1000 ո. ավելի յեկամտի յուրաքանչյուր ուրբուց
3000 ուր. մինչև 6000 ո.	1350 ո. + 60 կ. — 3000 ո. ավելի յեկամտի յուրաքանչյուր ուրբուց.
6000 ուր. ավելի	3150 ո. + 70 կ. — 6000 ավելի յեկամտի յուրաքանչյուր ուրբուց:

100 հոդ. Քաղաքային հողերում գյուղատնտեսութեամբ սլաքապող կուլակը յենթակա յե գյուղատնտեսական հարկի:

101 հոդ. Անհատական կարգով հարկի յենթարկվող տնտեսութեանները ամբողջ հարկը վճարում են մի ժամկետում, այն է 1935 թ. սեպտեմբերի 1-ից վոչ ուչ:

§ 87. Գյուղխորհուրդները և շրջֆինրաժինները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները, վորպեսզի ապահովվի կուլակային տնտեսութեանների լրիվ հայտնաբերումն ու նրանց վրա հաշվարկված գյուղհարկի լրիվ գանձումը վճարման համար սահմանված ժամկետում: Մասնավորապես, նախորդ պետք է կազմել կուլակային տնտեսութեանների գույքի ապահովիչ վերգիրներ, կալանք դնել ուրիշ անձանց մոտ գտնվող կուլակային տնտեսութեան դրամի և գույքի վրա:

Աշխատավորական տնտեսութեաններին անհատական կարգով հարկի յենթարկելու, ինչպես և կուլակային տնտեսութեաններին այդ կարգով չհարկելու բոլոր դեպքերում, ֆինամարմինները պարտավոր են հայտնաբերել յեղաթյուրումների մեջ մեղավորներին և յենթարկել յիստ պատասխանատվութեան:

102 հոդ. Ապակուլակացված տնտեսութեանները հարկի յեն յենթարկվում աշխատավորական մենատնտեսների համար սահմանված ընդհանուր հիմունքներով, բայց վոչ մի արտոնութեան չեն ստանում (ներառյալ նաև 66-րդ հոդվածում մատնանշված զեղչը):

103 հոդ. Այն տնտեսութեանները, վորոնց կազմի մեջ մտնում են իրենց անցյալ գործունեյութեան պատճառով ընտրական իրավունքներից զրկված անձինք՝ ճառով ընտրական իրավունքներ և այլն), յեթե նախկին ժանդարմներ, վոստիկաններ և այլն), յեթե նրանք վոչ մի հատկանիշ չունեն անհատական կարգով հարկի յենթարկվելու համար, հարկային վոչ մի արտոնութեան չեն ստանում (ներառյալ նաև 66-րդ հոդվածում հիշատակված զեղչը), իսկ դրանցից ընդհանուր հիմունքներով հասանելիք հարկի գումարը կրկնապատկվում է:

§ 88. 103-րդ հոդ. սահմանված կարգով գյուղհար-

կի յենթարկելը գործադրվում է նաև այն տնտեսութ-  
յունների նկատմամբ, վորոնց կազմի մեջ կան վոչ աշ-  
խատավորական գործունեյության համար ընտրական  
իրավունքներից զրկված անձինք (նախկին վաճառական-  
ներ, Փարրիկանտներ, կալվածատերեր և այլն):

ՀԱՏՎԱԾ 6

ՀԱՐԿ ԳԱՆՁՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴԻՄՈՒՄՆԵՐ ՈՒ ԲՈ-  
ՂՈՒՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՅԵՎ ՔՆՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

104 հոդ. Ճիշտ և ժամանակին հարկի կիրառման  
պատասխանատվությունը դրվում է շրջանային գործա-  
դիր կոմիտեների և գյուղխորհուրդների վրա (իսկ հա-  
մապատասխան դեպքերում քաղխորհուրդների վրա):

105 հոդ. Քաղխորհուրդներին, շրջանային գործա-  
դիր կոմիտեներին և գյուղխորհուրդներին կից կազմա-  
կերպվում են հարկային հանձնաժողովներ:

1. Շրջ. (քաղ.) գործկոմներին կից կազմակերպ-  
վում են հարկային հանձնաժողովներ հետևյալ կազ-  
մով.

ա) նախագահ— շրջանային գործադիր կոմիտեյի  
կամ քաղխորհրդի նախագահը, կամ նրա տեղակալը:

բ) Ֆինբաժնի վարիչը.

գ) հողբաժնի վարիչը.

դ) պլանային բաժնի ներկայացուցիչը.

յե) արհխորհրդի ներկայացուցիչը.

զ) տնայնագործական կոոպերացիայի ներկայացու-  
ցիչը.

ե) շեֆ. գործարանի ներկայացուցիչը:

Շրջանային հարկ. հանձնաժողովների վրա հետևյալ  
պարտականություններն են դրվում.

ա) Քննության առնել և շրջանային գործադիր կո-  
միտեյին ի հաստատություն ներկայացնել առանձին  
գյուղխորհուրդների, իսկ պատշաճ դեպքերում գյուղե-  
րի համար սահմանված կոլտնտեսությունների, կոլտըն-  
տեսականների հարկի դրույթները և մենատնտեսների  
յեկամտարբերության նորմաները:

բ) Քննել և հաստատել գյուղատնտեսական մթերք-  
ները մասնավոր շուկայում գոյացած գներով վաճառող  
տնտեսությունների կամ վոչ գյուղատնտեսական յեկա-  
մուտներ ունեցողների ցուցակները և այդ աղբյուրներից  
ստացած յեկամտի գումարները:

գ) Քննել և ներկայացնել շրջգործկոմներին (քաղ-  
խորհուրդներին) ի հաստատություն պլաններն ու պար-  
տավորությունները չարամտորեն չկատարող տնտեսու-  
թյունների ցուցակները:

դ) Քննել և շրջգործկոմին ի հաստատություն ներ-  
կայացնել հարկից լրիվ կամ մասնակի չափով ազատ-  
վող տնտեսությունների ցուցակները (նույն թվում կոլ-  
տնտեսականների ցուցակները):

յե) Քննել և արտոնություն տալ բնական աղետնե-  
րից տուժած տնտեսություններին:

զ) Քննել և լուծել հարկատուների (վորոնց թվում և  
կոլտնտեսությունների) դանդատները:

ե) Քննել անհատական կարգով հարկվող տնտեսու-  
թյունների ցուցակները և վորոշել նրանց յեկամուտ-  
ները:

Շրջանային գործադիր կոմիտեների և գյուղխոր-  
հուրդների (իսկ հարկ յեղած դեպքում քաղխորհուրդ-  
ների) վրա յե դրվում հարկի չափը վորոշելու համար  
անհրաժեշտ տվյալների ճիշտ ու ժամանակին հաշվառ-  
ման, հարկվող յեկամուտները և հարկը ճիշտ վորոշե-  
լու, հարկաթերթերը հանձնելու և հարկը լրիվ դանձելու  
պատասխանատվությունը:

2. Գյուղխորհուրդներին կից կազմակերպվում են  
գյուղական հարկային հանձնաժողովներ:

Գյուղական հարկային հանձնաժողովի կազմի մեջ  
մտնում են.

- ա) գյուղխորհրդի նախագահ— նախագահ.
- բ) գյուղխորհրդի ֆինսեկցիայի նախագահը.
- գ) գյուղխորհրդի դաշտագործության (հողային  
սեկցիայի) ներկայացուցիչը.
- դ) կոլտնտեսության վարչության ներկայացու-  
ցիչը.

յե) մեկ հարվածային կոշտնտեսական.

զ) գյուղխորհրդի կազմի մեջ մասնող մեկ առաջավոր մենատնտես.

ե) տեղի արհեստագործական կոոպերացիայի ներկայացուցիչը:

Գյուղական հարկային հանձնաժողովների վրա հետեվյալ պարտականություններն են դրվում.

ա) Գյուղի տնտեսությունների, նրանց գյուղատնտեսության յեկամուտների աղբյուրների հաշվառումը, վոչ գյուղատնտեսական և շուկայի գներով մթերքների վաճառող տնտեսությունների ցուցակների կազմելը և այդ յեկամուտները վորոշելն ու գյուղխորհուրդին ներկայացնելը:

բ) Անհատական կարգով հարկման յենթակա կուլակային տնտեսությունների յեկամուտները վորոշելը և նրանց ցուցակների քննությունը:

գ) Գյուղհարկից ազատվող սակավագոր կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների ցուցակների կազմելը, քննելը, և գյուղխորհրդի պլենումին ներկայացնելը:

դ) Հարկատուների դիմումները և դանդառները քննելը և իր յեզրակացությամբ գյուղխորհրդին ներկայացնելը:

106 հոդ. Բոլոր հիմնարկները, կազմակերպություններն ու ձեռնարկությունները պարտավոր են Ֆինանսական մարմիններին, շրջանային գործադիր կոմիտեներին և գյուղխորհուրդներին, նրանց պահանջով ճիշտ տեղեկություններ տալ հարկատուներին վճարված գումարների մասին:

107 հոդ. Կոլտնտեսությունների հարկի վերաբերյալ դիմումներն ու դանդառները տրվում են շրջանային Ֆինանսական բաժնին, վորն ամենաուշը յերեք որում պետք է հանձնի այդպիսիները իր յեզրակացության հետ միասին շրջանային հարկային հանձնաժողովներին ի քննություն:

Շրջանային հարկային հանձնաժողովների վորոշումները կարելի յե բողոքարկել յերկրային ու մարզա-

յին Ֆինանսական բաժնիներին, իսկ յերկրային ու մարզային բաժին չունեցող դաշնակից ինքնավար հանրապետություններում՝ Ֆինանսների ժողովրդական կոմիտեի տնին:

Մարզային ու յերկրային Ֆինանսական բաժնիների և ինքնավար հանրապետությունների Ֆինանսների ժողովրդական կոմիտեի տնների վորոշումների դեմ կեղծվողական կամ իտարիտնների վորոշումների դեմ կեղծվողական կամ իտարիտնների վորոշումների դեմ կեղծվողական կոմիտեի տններին:

108 հոդ. Կոլտնտեսականների և մենատնտեսների գյուղատնտեսական հարկի վերաբերյալ բոլոր դիմումներն ու դանդառները տրվում են գյուղխորհուրդներին, վորոնք պարտավոր են անհապաղ հանձնել այդպիսիները գյուղական հարկային հանձնաժողովներին ի քննություն:

Գյուղական հարկային հանձնաժողովների վորոշումների դեմ կարելի յե բողոքարկել շրջանային հարկային հանձնաժողովներին, իսկ շրջանային հարկային հանձնաժողովների վորոշումների դեմ՝ մարզային ու յերկրային Ֆինանսական բաժնիներին և դաշնակից ու ինքնավար հանրապետությունների Ֆինանսների ժողովրդական կոմիտեի տններին:

109 հոդ. Դիմումներն ու դանդառները տալու և քննելու համար սահմանվում են հետևյալ ժամկետները.

ա) Յեկամտի աղբյուրները սխալ հաշվելու, յեկամուտը վորոշելու և հարկը հաշվելու դեմ տրվող դանդառներն, ինչպես և արտոնություններ ստանալու համար արտոնություններ ստանալու դիմումներից), համար արտոնություններ ստանալու դիմումներից) պետք է տրվեն հարկի ծանուցագրերը հարկատուին հանձնելուց տասն որվա քննություն:

բ) Տարբերային աղեանների պատճառով արտոնություններ ստանալու դիմումները տրվում են մինչև յեկամտի աղբյուրների հաշվառում սկսվելը, յեթե աղետե տեղի յե ունեցել հաշվառումից առաջ, իսկ մնացած դեպքերում դիմումները տրվում են տարբերային աղե-

տը տեղի ունենալուց ամենաուշը տասն որվա ընթացքում:

գ) Դիմումներն ու գանգատները պետք է ըննվեն ամենաուշը հանձնվելուց տասն որվա ընթացքում:

110 հոդ. Դիմումներ ու գանգատներ տալը չի դադարեցնում հարկի գանձումը: Այն դեպքերում, յերբ վորոշում կայացվի հոգուտ հարկատվի, սխալ գանձված գումարները և վերցված գույքը պետք է վերադարձվեն տասն որվա ընթացքում: Յեթե հնարավոր չէ գույքը վերադարձնել վաճառված լինելու պատճառով, պետք է հատուցվի նրա լիակատար արժեքը:

Հարկի լրիվ կամ մասնակի վճարումը չի կարող պատճառ լինել վճարողի դիմումը կամ բողոքը մերժելու համար:

§ 90. Բոլոր Հարկային Հանձնաժողովները, մարզային (յերկրային) Փինրաժինները և հանրապետական Փինժողկամատները բողոքների վերաբերյալ հանած իրենց վորոշումները հայտնում են ինչպես այն Փինմարմնին, վորից ստացվել է հարկման նյութը, նույնպես և անպայման գանգատավորին անմիջականորեն:

Գյուղխորհուրդներն այդ վորոշումները ստանալուց յերեք որից վոչ ուշ, պետք է համապատասխան ուղղումներ կատարեն տնտեսությունների գրքում և անձնական հաշիվներում:

Յեթե գանգատի վերաբերյալ վորոշումը հանվել է գյուղական հարկային հանձնաժողովի կողմից, ապա այդ վորոշումը հատուկ ծանուցագրով (գյուղխորհուրդների հաշվառման ձև № 2) գյուղխորհուրդի կողմից մյուս որը հանձնվում է գանգատ տվող վճարողին:

§ 91. Կոլտնտեսությունների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների գանգատները գյուղահարկի մասին ազատվում են պետական միասնական տուրքից: Կուլակների գանգատները հարկերի մասին վճարվում են պետմիաստուրքով, նայած հարկի գումարին հետևյալ չափերով:

Հաշվարկված հարկի գումարը	Պետմիաստուրքի գումարը
--------------------------	-----------------------

Մինչև 500 ուրբ.	10 ուրբ.
500 ո. վեր մինչև 5000 ո.	15 ուրբ.
5000 ուրբ. վեր	30 ուրբ.

Այն դեպքերում, յերբ առաջին գանգատներին ավելացվում են լրացուցիչ դիմումներ, ապա այդ վերջին դիմումները վճարվում են պետմիաստուրքով 3 ուրբու չափով:

§ 92. Յեթե միևնույն գանգատում, բողոքարկվում է յերկու վճարումների հաշվարկում (որինակ գյուղահարկը և ինքնահարկումը), ապա պետմիաստուրքը հարկը և ինքնահարկումը ընդհանուր գումարի պետք է վճարվի այդ հարկերի ընդհանուր գումարի հաշվով: Այսպես՝ յեթե գյուղահարկի գումարը 500 ո. է և ինքնահարկումը 1000 ո. ապա յեկնելով այդ վճարումների ընդհանուր գումարից (1500 ո.) պետմիաստուրքը պետք է վճարվի 15 ուրբու չափով: Պետմիաստուրքը վճարվում է գանգատը տալու ժամանակ: Պետմիաստուրքի վճարման համար վճարողին անպայման տրվում է անդորրագիր (գյուղխորհուրդի հաշվառ. ձև № 22):

ՀԱՏՎԱԾ 7.

ՀԱՐԿԱՏՄԻՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

111 հոդ. Յեկամուտի աղբյուրները թագցնելու համար հարկատուները տուգանվում են վարչական կարգով, կամ յենթարկվում են դատական պատասխանատվության:

Տուգանքը դրվում է գյուղխորհուրդի կողմից: Տուգանքը չպետք է գերազանցի տնտեսության ամբողջ հարկի կրկնապատիկ գումարից:

Տուգանելու վերաբերյալ գյուղխորհուրդի ընդունած վորոշման դեմ կարելի է բողոքել չրջանային գործադիր կոմիտեյին, վորի վորոշումը վերջնական է:

112 հոդ. Կոլտնտեսությունների հարկը հաշվելու համար սխալ տեղեկություններ տվող անձինք տուգանվում են մինչև 25 ուրբլով:

§ 93. Տուգանելու վերաբերյալ վորոշումը կայացնելու հաջորդ օրից վոչ ուշ, գյուղխորհուրդը հայտնում է վճարողին վերջինի ստորագրությամբ: Տուգանքի գումարը պետք է մուծվի վորոշումը հանձնելուց 5 օրվա ընթացքում:

Տուգանքը սահմանված ժամկետում չմուծելու դեպքում գյուղխորհուրդը գանձում է ստիպողական կարգով, գյուղհարկի ապառքների գանձման հետ հավասար հիմունքներով: Տուգանքի գումարի վրա տուժ չի բարդվում:

§ 94. Յեթե ստուգման ժամանակ հայտնաբերվեն թե հարկվող և թե հարկումից ազատվող օբյեկտների թագցումներ գյուղհարկի հաշվառումից, օբյեկտների հաշվառում կատարող մարմինները (գյուղխորհուրդները, գյուղական հարկ. հանձնաժողովները) անմիջապես կազմում են արձանագրություն այդ առթիվ: Յուրաքանչյուր առանձին տնտեսության վրա կազմված արձանագրության մեջ ցույց են տրվում հայտնաբերված նոր օբյեկտները (ներառյալ և այնպիսիները, վորոնք հարկումից ազատվում են (որինակ կոլտնտեսականների անասունները և այլն) տնտեսությունների գրքում անհրաժեշտ ուղղումներ մտցնելու նպատակով:

§ 95. Թագցրած անասուններ հայտնաբերելու բոլոր դեպքերում (թե հարկվող և թե հարկումից ազատվող) գյուղխորհուրդները պարտավոր են ուղղումներ մտցնել տնտեսությունների գրքերում, իսկ անհրաժեշտ պարագաներում վերահաշվարկել նաև գյուղհարկի յենթակա յեկամուտները:

Ըստ նոր հայտնաբերվող յեկամուտների լրացուցիչ հարկում կատարվում է ամբողջ տարվա ընթացքում: Յեթե լրացուցիչ հարկումը կատարվում է վճարման ժամկետները լրանալուց հետո, ավելացված գումարը պետք է մուծվի անդորրագրերը վճարողին հանձնելուց 10 օրվա ընթացքում:

113 հոդ. Յեթե կոլտնտեսականները և մենատնտեսները որենքով սահմանված ժամկետում չեն վճարում իրենց տնտեսությունների հարկը, այդ դեպքում գյուղխորհուրդները պարտավոր են նրանց նկատմամբ գործադրել դանձման հարկադիր միջոցներ, համաձայն հարկերի և վոչ հարկային վճարումները գանձելու կանոնադրության:

Մասնավորապես հարկը չվճարողների գույքը վերգրվում է և վաճառվում է, իսկ վճարումն ուշացնելու համար տույժ է գանձվում հետևյալ չափով.

Կոլտնտեսություններից 0,1 տոկոս, կոլտնտեսականներից և աշխատավոր մենատնտեսներից 0,2 տոկոս, կուլակային տնտեսություններից 1 տոկոս ամեն մի ուշացրած օրվա համար:

ՀԱՏՎԱԾ 8

ԳՅՈՒՂ ՀԱՐԿԻ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

114 հոդ. Գյուղհարկի գանձված բոլոր գումարները հատկացվում են տեղական բյուջեին:

ՀԱՏՎԱԾ 9

ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ

115 հոդ. Դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիտեաների Խորհուրդների և տեղական գործադիր կոմիտեաների սույն կանոնադրությամբ նախատեսված վորոշումները պետք է հրապարակվեն ամենաուշը մինչև 1935 թ. հունիսի 10-ը:

116 հոդ. Սույն կանոնադրության վերաբերյալ հրահանգներ հրատարակելու գործը հանձնարարվում է ԽՍՀՄ-ի Ֆինանսների ժողովրդական կոմիտեաներին:

ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 96. Վճարումներն ընդունում է գյուղխորհրդի քարտուղարը կամ նախագահը, բացի այս հրահանգի §§ 99 և 100-ում նշված դեպքերից: Հաշվետարը բնակչութունից վճարումներ ընդունելու իրավունք չունի: Արգելվում է վճարումների ընդունումը գյուղխորհրդի շենքից դուրս (ոչինչակ տներում, գաշտում և այլն):

Յեթե գյուղխորհրդի կազմի մեջ մտնում են մի շարք գյուղեր, այդ դեպքում թույլատրվում է գանձում կատարել հատուկ լիազորների միջոցով, վորոնք պետք է հաստատված լինեն գյուղխորհուրդների պլենումի և չրջֆինբաթիների կողմից և անպայման ունենան իրենց ձեռքում գյուղխորհրդի նախագահի և չրջֆինբաթնի ստորագրությամբ և կնիքով համապատասխան վկայական: Լիազորների ազգանունները պետք է հայտնի լինեն բնակչությանը: Յուրաքանչյուր լիազորին ամրացվում է գյուղ, վորտեղ նա իրավունք ունի վճարումներ ընդունելու: Այդ գյուղի անունը պետք է ցույց տրված լինի վկայականում:

§ 97. Գյուղհարկի մուծումները վճարողներից ընդունվում են վճարման ծանուցագրերով (գյուղխորհրդի հաշվառման ձև № 20 ա և 20 բ.) բացի այն դեպքերից, յերբ հարկը փոխադրվում է պոստային հիմնարկների միջոցով:

§ 98. Ամեն մի մուծված գումարի վերաբերյալ գյուղխորհուրդը կամ խնայդրամարկը (յեթե վերջինի վրա յե դրված գյուղխորհրդի լրիվ դրամարկային սպասարկումը), վճարողին անպայման տալիս է անդորրագիր (ձև 22): Առանց սահմանված ձևով անդորրագրերի կամ վորևէ ստացականով դրամ ընդունելն արգելվում է և այս կարգը խախտող անձինք յենթակա յենքրեական պատասխանատության:

§ 99. Խնայդրամարկը գյուղհարկի մուծումներն

ընդունում է այն դեպքում, յերբ նրա վրա յե դրված գյուղխորհրդի դրամարկային լրիվ սպասարկումը:

Այդպիսի դեպքերում գյուղխորհուրդը մուծումներ ընդունելու իրավունք չունի:

Խնայդրամարկը ընդունում է միայն իր կողմից սպասարկվող գյուղխորհրդի սահմաններում բնակվող քաղաքացիների վճարումները:

Խնայդրամարկների կողմից վճարումներ ընդունելու կարգը սահմանված է ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի 1933 թ. հունիսի 28-ի հատուկ հրահանգով: (Հրահանգ գյուղխորհուրդների դրամարկային սպասարկման մասին խնայդրամարկների միջոցով):

§ 100. Պետքանկի հիմնարկները գյուղհարկի վճարումներն ընդունում են անկախ նրանից, թե վորտեղ է գտնվում տնտեսությունը, վորի համար վճարվում է գյուղհարկը, կամ վորտեղ է բնակվում վճարողը:

Վճարումներն ընդունելու ժամանակ պետքանկի հիմնարկները կազմում են հաշվարկ պետքանկի № 130 ձևով յերեք որինակից, վորոնցից մեկը տրվում է վճարողին անդորրագրի փոխարեն, յերկրորդը մնում է Պետքանկում, իսկ յերրորդը չրջֆինբաթնի միջոցով ուղարկվում է գյուղխորհրդին:

§ 101. Գյուղխորհրդի կողմից հավաքված գյուղհարկի գումարները (նույն թվում նաև լիազորների միջոցով գանձված կամ պոստի միջոցով փոխադրված գումարները), հանձնվում են Պետքանկին անմիջականորեն կամ կապի մարմինների միջոցով ուղեկցող տեղեկագրի հաշվ. ձև № 33), հետ միասին (գյուղխորհուրդների հաշվ. ձև № 33), չրջֆինբաթիների կողմից սահմանվող ժամկետներում: Գումարների պահպանության և ժամանակին հանձնելու պատասխանատությունը կրում են գյուղներու պատասխանատությունը: Պետքանկ դրամ փոխախորհուրդների նախագահները: Պետքանկ դրամ փոխախորհուրդների հարկերի, ապահովագրական և վերանցում «պետական հարկերի, ապահովագրական և այլ վճարումների» գրքում (գյուղխորհրդի հաշվառման ձև № 29):

§ 102. Շրջֆինբաթիները և գյուղխորհուրդները

պետք է ապահովեն այնպիսի կարգ, վորի համաձայն հարկի վճարման ժամկետը լրանալուց հետո, հետևյալ որը յորաքանչյուր գյուղխորհուրդում կազմված լինեն ապառքատերերի ցուցակները (գյուղխորհուրդների հաշվառման ձև № 24): Դրանից անմիջապես հետո գյուղխորհուրդը պարտավոր է կանչել ապառքատերերին և պահանջ դնել հարկը վճարելու մասին: Այդ առաջարկը չկատարելու դեպքում, ապառքատիրոջ նկատմամբ պետք է կիրառել գանձման ստիպողական միջոցներ հարկային և վոչ հարկային վճարումների գանձման կանոնադրության կարգով:

**ՀՄԽՀ-ի Ֆինստղկում՝ Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ**

Մասսայական վճարումների վարչության պետ՝  
**ԶԱՎԱՀԻՐՅԱՆ**

**Հ Ր Ա Հ Ա Ն Գ**

**1935 թ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄԸ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

1. Հող. Որենքի: Բնակչության ինքնահարկումը կատարվում է նրա կուլտուրական և տնտեսական կարիքները բավարարելու համար, գյուղական վայրերում և ամառանոցային ավաններում:

§ 1 Հրահանգի: Ինքնահարկում չի կարող կիրառվել բանվորական ավաններում և բանվորներով ու ծառայողներով բնակված՝ ձեռնարկությունների, խորհրդային տնտեսությունների և այլ ավաններում, յեթե նույնիսկ վերջինները դաշնակից հանրապետությունների ԿԳԻ վորչմամբ բանվորական ավաններ չեն համարվում և վարչավորվում են գյուղխորհուրդների կողմից:

Առանձին քաղաքներում և բանվորական ավաններում ինքնահարկում կարող է կատարվել միայն գյուղատնտեսությամբ զբաղվող և գյուղհարկի յենթարկվող բնակչության մեջ:

Ինքնահարկումը ՀՄԽՀ-ում կիրառվում է բոլոր այն վայրերում, վորտեղ գյուղհարկ է գանձվում: Յերևան, Լենինական և Կիրովական քաղաքներում ինքնահարկում չի կատարվում:

2. Հող. Որենքի: Ինքնահարկման կարգով հավաքված միջոցները, տեղական բյուջեների մեջ չեն մտցվում և բաշխվում են հետևյալ կարգով.

ա) ինքնահարկման միջոցների մինչև 65 տոկոսը գյուղական վայրերում գործադրվում է դպրոցաշինարարության վրա, ի լրումն բյուջեյով բաց թողնվող դումարների:

Շրջանային գործադիր կոմիտեներին իրավունք ե վերապահվում, յեղնելով դպրոցաշինարարության պլանից այդ միջոցները վերաբաշխել շրջանի ներսում առանձին գյուղխորհուրդների միջև:

բ) Ինքնահարկման միջոցների 35 տոկոսից վոչ պակաս մասը մնում է գյուղխորհրդի տրամադրության տակ, գյուղի այն կուլտուր-կենցաղային կարիքները բավարարելու համար, վորոնք չեն նախատեսված բյուջեյում:

§ 2 Հրահանգի: Դաշնակից և ինքնավար հանրապետությունների Ֆինտոդկոմաաները և յերկրային (մարզային) Ֆինբաժինները պարտավոր են սահմանել ուժեղ հսկողություն, վորպեսզի ինքնահարկման կարգով հավաքված միջոցները չմտցվեն վոչ շրջանային և վոչ ել գյուղական բյուջեները և վորպեսզի այդ միջոցները ծախսվեն ուղղակի նպատակների վրա:

§ 3 Հրահանգի: Յեղնելով շրջանի դպրոցաշինարարական պլանից, շրջգործկոմները յուրաքանչյուր գյուղխորհրդի համար սահմանում են դպրոցաշինարարությանը հատկացվող մասհանումների չափը (տոկոսը) ինքնահարկման միջոցներից:

Դպրոցաշինարարությանը հատկացվող ինքնահարկման մասհանումների չափը չի կարող գերազանցել յուրաքանչյուր գյուղխորհրդում հավաքվող ինքնահարկման միջոցների 65 տոկոսից:

Այդ մասհանումներն առաջին հերթին ծախսվում են գյուղական վայրերում 1935 թ. պլանով նախատեսված կամ 1934 թ. չավարտված դպրոցաշինարարության վրա և այդ շինարարությունն ապահովելուց հետո միայն, ինքնահարկման միջոցները նշված սահմաններում (65 տոկոսից վոչ ավելի) թուլատրվում է ծախսել նախահաշվային կարգով դպրոցների կահավորման, հիմնական և ընթացիկ վերանորոգման վրա:

Ինքնահարկման մնացած բոլոր միջոցները, (դուրս յեկած դպրոցաշինարարության համար կատարվող մասհանումը) բայց վոչ պակաս քան տվյալ գյուղում գանձ-

ված գումարի 35 տոկոսը, ամբողջությամբ տրվում է գյուղխորհուրդների տրամադրության տակ և ծախսվում է գյուղի բյուջեյով չնախատեսված կուլտուր-կենցաղային կարիքների վրա:

§ 4 Հրահանգի: Ինքնահարկի այն գումարը, վորը մնում է գյուղխորհրդի լիակատար տրամադրության տակ, ծախսվում է գյուղխորհրդի կողմից կազմված և համայնքի ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշվի (սմետա) կարգով:

Գյուղական վերստուգիչ հանձնաժողովները պարտավոր են յուրաքանչյուր յեռամսյակում ստուգել գյուղխորհուրդների տրամադրության տակ թողնված իքնահարկման գումարների ճիշտ ոգտագործման փաստաթղթերը:

3 Հոդ. Որենքի: Ինքնահարկումը կարող է կատարվել միմիայն տվյալ գյուղի ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշմամբ:

Ինքնահարկում սահմանելու համար, ժողովին պետք է ներկա լինի տվյալ գյուղի ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թվի առնվազն կեսը: Յեթե ժողովին ներկա չլինեն այդքան թվով քաղաքացիներ, ապա հրավիրվում է յերկրորդ ժողով, վորն իրավազոր է համարվում, յեթե նրան մասնակցում է ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թվի մի յերրորդ մասը:

Ինքնահարկումը սահմանվում է ժողովին նրկա գտնվող քաղաքացիների ձայների մեծամասնությամբ: Ժողովում ընդունված վորոշումները պարտադիր են բոլոր քաղաքացիների համար:

4 Հոդ. Որենքի: Քաղաքացիների ընդհանուր ժողովը քննում է այն ձեռնարկումները, վորոնք իրագործվում են ինքնահարկմամբ հավաքված միջոցներով, վորոշում է ինքնահարկման դրույքները վճարողների արոշում է ինքնահարկման դրույքները վճարողների մեջ առանձին կատեգորիաների համար, այս վորոշման մեջ նախատեսված սահմաններում, ինչպես և ինքնահարկի վճարումների մուծման ժամկետները:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**— Ինքնահարկի մուծման ժամկետները սահմանվում են այնպիսի հաշվով, վոր վճարումները սկսվեն ամենաուշը սեպտեմբերի 1-ին և վերջնան մինչև 1935 թ. դեկտեմբերի մեկը:

5 Հող. Որենքի: Ինքնահարկման մասնակցում են՝

ա) կոլտնտեսականները.

բ) անհատական գյուղացիական տնտեսութունները.

գ) գյուղական վայրերում մշտապես ապրող, թեպետ գյուղատնտեսությամբ չսպարապող քաղաքացիները:

§ 5 Հրահանգի: Գյուղխորհուրդը պարտավոր է, սովյալ գյուղի բոլոր քաղաքացիներին նախորոք իրադեկ դարձնել ժողովի նպատակի, տեղի և ժամանակի մասին:

§ 6 Հրահանգի: Մեծ գյուղերում քաղաքացիների ընդհանուր ժողովները կարող են հրավիրվել առանձին թաղերում (կամ թաղամասերում) ըստ վորում գյուղխորհուրդը պարտավոր է սահմանել ժողովները անցկացնելու հերթականութուն և նշանակել գյուղխորհուրդի անդամներ՝ յուրաքանչյուր այդպիսի թաղային (կամ թաղամասային) ժողովին մասնակցելու համար:

§ 7 Հրահանգի: Գյուղխորհուրդը պարտավոր է զեկուցել քաղաքացիների ընդհանուր ժողովին, թե ինքնահարկման վոր տոկոսը և մոտավորապես ի՞նչպիսի դումար է մնում իր տրամադրության տակ գյուղի արտաբյուջետային կարիքների համար:

Միաժամանակ գյուղխորհուրդը ընդհանուր ժողովին է հաստատութուն և ներկայացնում կուլտուր-կենցաղային կարիքների այն ցանկը (նախահաշիվը), վորը պետք է իրադրծվի ինքնահարկման միջոցներով:

Բացի դրանից, ժողովին պետք է հայտնել ինքնահարկման միջոցներից մասհանվող այն տոկոսի մասին, վորը շրջանային գործադիր կոմիտեյի վորոշմամբ, իբրև լրացում, արվում է բյուջեյով նախատեսված զարոցա-

շինարարության գումարին շրջանի գյուղական վայրերում:

§ 8 Հրահանգի: Քաղաքացիների ընդհանուր ժողովի ինքնահարկման վերաբերյալ ընդունված վորոշումը արձանագրվում է: Այդ արձանագրության մեջ անպայման պետք է մատնանշված լինի՝

ա) ընտրական իրավունքներով ոգտվող գյուղի քաղաքացիների թիվը և նրանցից ժողովներում ներկայեղողների թիվը:

բ) ի՞նչ նպատակի համար է անցկացվում ինքնահարկումը.

գ) կոլտնտեսականների համար ժողովի կողմից ընդունված ինքնահարկի դրույթը.

դ) մենատնտեսների համար ժողովի կողմից ընդունված գյուղահարկի համեմատությամբ ինքնահարկման տոկոսը.

ե) կուլակային տնտեսութունների համար ընդունված դրույթը.

և) ինքնահարկման մուծումների վճարման ժամկետները:

Արձանագրությունը կազմվում է յերկու որինակից և անպայման ստորագրվում է գյուղխորհուրդի նախագահի և քարտուղարի կողմից:

Արձանագրության մեկ որինակը մնում է գյուղխորհուրդում, իսկ յերկրորդը վոչ ուշ քան հետևյալ որը գյուղխորհուրդը ուղարկում է շրջանային գործադիր կոմիտեյին:

§ 9 Հրահանգի: Տվյալ գյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշած ինքնահարկի դրույթները (որենքով նախատեսնված սահմաններում) շրջգործկոմի կողմից հաստատվելուց հետո, պարտադիր են բոլոր քաղաքացիների համար և փոփոխության յենթակա չեն:

§ 10 Հրահանգի: Այն քաղաքացիները, վորոնք ապրում են մեկ գյուղում և ունեն արհեստից, շենքերը վարձով տալուց և այլ յեկամուտներ մի ուրիշ գյուղում, ինքնահարկման են յենթարկվում մեկ անգամ իրենց հիմնական բնակավայրում:

6. Հող. Որենքի: Ինքնահարկման չեն մասնակցում գյուղատնտեսությամբ չպարապող.

ա) բանվորներն ու ծառայողները.

բ) Խորհրդային Միության հերոսները, ԽՍՀՄ-ի շքանշաններով, կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձինք և աշխատանքի հերոսները.

գ) կադրային, շարային և ստորին պետկազմի ժամկետային (անընդհատ) կամ գերժամկետային ծառայության մեջ գտնվող զինվորականները, հաշված նաև 1935 թ. աշնանը զորակոչվածներին:

դ) Բանվորագյուղացիական կարմիր բանակի միջին, ավագ և բարձր պետկազմի կադրային և ռեզերվում գտնվող զինվորականները:

ե) ստորին պետկազմի այն զինվորականները, վորոնք յերկարատև արձակուրդից փոխադրվել են տերիտորիալ զորամասերի փոփոխական կազմի մեջ.

զ) Բանվորագյուղացիական կարմիր բանակի յերկարատև արձակուրդում, պահեստում և տերիտորիալ մասերի փոփոխական կազմում գտնվող միջին, ավագ ու բարձր պետկազմի այն անձինք, վորոնք վորպես Պաշտպանության հաստիքային աշխատողներ, պարապում են աշխատավորների ռազմական պատրաստությամբ:

է) նախկին կարմիր զվարդիականները և կարմիր պարտիզանները.

ը) Պետական հատուկ նշանակութուն ունեցող ձեռնարկությունների ու կառուցվածքների ռազմականացված պահակի, ռազմականացված հրշեջ պահակի, շարային ու վարչատնտեսական կազմին պատկանող անձինք, բանվորագյուղացիական միլիցիայի ու պերատիվ շարային և վարչատնտեսական կազմին պատկանող անձինք, ինչպես և ուղղիչ աշխատանքային հիմնարկների ու պերատիվ և վարչատնտեսական կազմին պատկանող անձինք.

թ) պատերազմի ու աշխատանքի հաշմանդամները, վորոնք դատված են հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին:

ժ) պետական որգանների կամ հասարակական կազմակերպությունների թոշակառուները:

իա) թոշակառու ուսանողները.

իբ) կրոպերացված տնայնագործներն ու արհեստավորները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— «գ» և «դ» կետերում

թվարկված զինվորականներն ինքնահարկման չեն մասնակցում նաև այն դեպքում, յեթե նրանք ըստացել են յերկարատև արձակուրդ, փոխադրվել են պահեստ կամ բոլորովին ազատվել են ծառայությունից 1935 թ. հունվարի մեկից հետո:

§ 11. Հրահանգի: Շենքեր ունեցող բանվորներն ու ծառայողները և այլ անձինք, վորոնք թված են 6-րդ հոդվածում, ինքնահարկման յենթարկվում են այն դեպքում միայն, յեթե նրանք չենքերը վարձով տալուց յեկամուտ են ստանում: Դրանց ինքնահարկման չափը վորոշվում է որենքի 13-րդ հոդ. կարգով, նայած թե վորքան յեկամուտ է ստացված չենքերը վարձով տալուց: Այդ անձանց աշխատավարձի յեկամուտը հաշվի չի առնվում:

7. Հող. Որենքի: Ինքնահարկման չեն մասնակցում այն բանվորներն ու ծառայողները, վորոնք գյուղատնտեսությամբ են պարապում տնամերձ հողամասում կամ յանջարեղեն ու գետնախնձոր ցանելու համար նրանց հատկացված հողամասերում, ունեն միայն մի կով, մանր անասուն և յոտահարքներ, բայց չունեն դաշկով, մանր անասուն և յոտահարքներ, յեթե աշխատավարձը կազմում է նրանց յեկամտի հիմնական աղբյուրը:

§ 12. Հրահանգի: Բանվորների և ծառայողների տնտեսությունները ոգտվում են ինքնահարկման որենքի տնտեսություններով արտոնություններով մի 7-րդ հոդվածով սահմանված արտոնություններով մի 7-րդ հոդվածով սահմանված աղատված են գյուղհարայն այն դեպքում, յեթե նրանք աղատված են գյուղհարայն այն դեպքում, յեթե նրանք աղատված են գյուղհարայն կից— գյուղհարկի որենքի 69-րդ հոդվածի կարգով:

§ 13. Հրահանգի: Բացի բանվորներից և ծառայողներից 7-րդ հոդվածով սահմանված արտոնությամբ ոգտվողները:

տրվում են կենսաթոշակ ստացող պատերազմի և աշխատանքի այն հաշմանդամները, վրոնք 1935 թ. ազատված են գյուղհարկից:

Կոոպերացված տնայնագործների և արհեստավորների անտեսությունների վրա (բացի պատերազմի և աշխատանքի հաշմանդամներից) որենքի 7-րդ հոդվածով սահմանված արտոնությունը չի տարածվում:

Յ. Հոդ. Որենքի: Կոլտնտեսութայն անդամ-բանվորներն ու ծառայողները, յեթե նրանք իրենք և նրանց ընտանիքի աշխատունակ անդամները կոլտնտեսութայն մեջ չեն աշխատում, կամ նրանց կոլտնտեսութայն մեջ կատարած աշխատանքը կրում է պատահական, փոչ սիտեմատիկ բնույթ (ոբլինակ՝ արձակուրդի ժամանակ, հանգստյան օրերին և այլն) և կազմում է սակավաթիվ աշխուր, ինքնահարկման չեն մասնակցում այն դեպքերում, յերբ նրանց չհանրայնացված գյուղական տնտեսությունը չի գերազանցում 7-րդ հոդվածում հիշատակված չափից:

§ 14 Հրահանգի: 1935 թ. աշխապամանագրով խորհրդային տնտեսութայն մեջ մշտական աշխատանքի անցնող մենատնտեսները ինքնահարկի չեն յենթարկվում, յեթե նրանք խորհրդային տնտեսություն աշխատանքի անցնելու հետևանքով 1935 թ. ազատված են գյուղհարկից:

9 Հոդ. Որենքի: Վերացված է:

10 Հոդ. Որենքի: Կոլտնտեսականների և աշխմենատնտեսների տնտեսություններն ինքնահարկմանը մասնակցում են հետևյալ չափով.

	Տնտեսութայն
Վճարողների կատեգորիաները	ինքնահարկման չափը

1. 1935 թ. գյուղհարկի յենթակա չհանրայնացված յեկամուտներ չունեցող կոլտնտեսականների տնտեսությունները

2 ոուրլի

2. 1935 թ. գյուղհարկի յենթակա չհանրայնացված յեկամուտներ ունեցող կոլտնտեսականների տնտեսությունները 3-ից մինչև 9 ոուրլի

3. Աշխատավորական մենատնտեսների տնտեսությունները Գյուղհարկի դրույքի 40 0/0-ից մինչև 60 0/0

Յուրաքանչյուր գյուղում սահմանվում է միատեսակ հաստատուն դրույք գյուղհարկի յենթակա յեկամուտներ ունեցող բոլոր կոլտնտեսականների համար, ու ինքնահարկման միատեսակ տեղոսային հարաբերություն գյուղհարկի նկատմամբ՝ բոլոր աշխատավոր մենատնտեսների տնտեսությունների համար:

Մենատնտեսների կողմից, փաստորեն վճարվող ինքնահարկի դրույքը բոլոր դեպքերում առնվազն 25 ինքնահարկի դրույքը բոլոր դեպքերում առնվազն 25 տոկոսով բարձր պետք է լինի գյուղհարկով կոլտնտեսականների ինքնահարկի այն դրույքից, վորը սահմանված է տվյալ վայրի համար:

§ 15 Հրահանգի: Կոլտնտեսականների տնտեսությունները, վրոնք 1935 թ. արտոնությունների կարգով լրիվ ազատված են գյուղհարկից, ինքնահարկման մասնակցում են գյուղհարկի յենթակա չհանրայնացված յեկամուտներ չունեցող կոլտնտեսականների համար սահմանված դրույքի չափով, այսինքն 2 ոուրլի գումարով:

§ 16 Հրահանգի: Գյուղհարկից սակավազորութայն պատճառով լրիվ կամ մասնակի չափով ազատված մենատնտեսների ինքնահարկի չափը վորոշվում է գյուղնատնտեսների ինքնահարկի տեղոսային հարաբերությամբ, ահարկի լրիվ գումարի տոկոսային հարաբերությամբ, ուանց սակավազորութայն գեղջը հանելու:

Այլ հիմունքներով գյուղհարկից արտոնություններ և գեղջեր ստացող մենատնտեսների ինքնահարկի չափը վորոշվում է գյուղհարկի փաստացի գումարի տոկոսային հարաբերությամբ, դուրս յեկած արտոնությունները և գեղջերը:

§ 17 Հրահանգի: Կոլտնտեսականների և մենատընտեսների տնտեսութունների ինքնահարկման մասնակցութեան չափը վորոշվում է այն հատկանիշներով, վորոնք հաշվի յեն առվել 1935 թ. գյուղհարկի համար, այսինքն տնտեսութեան գրքերի տվյալների հիման վրա:

§ 18 Հրահանգի: Այն մենատնտեսների տնտեսութունները, վորոնք կոլտնտեսութուն են մտել գյուղհարկի որեկտները հաշվի առնելուց հետո, բայց մինչև գյուղհարկի վճարման առաջին ժամկետը, ինքնահարկման են յենթարկվում վորպես կոլտնտեսականներ:

§ 19 Հրահանգի: Այն տնտեսութունները, վորոնք 1935 թ. յենթարկված են գյուղհարկի կրկնապատկված չափով. (գյուղհարկի որեքի 67 և 103-րդ հոդվածները) ինքնահարկման են յենթարկվում կրկնապատկված գյուղհարկի գումարի տոկոսային հարաբերութեամբ:

§ 20 Հրահանգի: Ինքնահարկման մասին ընդհանուր ժողովի ընդունած վորոշումը չըջգործկումի կողմից հաստատվելուց անմիջապես հետո, գյուղխորհուրդը պարտավոր է հաշվարկել ինքնահարկման չափը յուրաքանչյուր առանձին տնտեսութեան համար:

Ծանուցագրերը հանձնվում են ինքնահարկի վճարման առաջին ժամկետից առնվազն 10 որ առաջ:

11 Հոդ. Որեքի: Վերացված է:

12 Հոդ. Որեքի: Երջանային գործկումները գյուղխորհուրդների միջնորդութեամբ կարող են ազատել լրբիվ կամ մասնակի չափով ինքնահարկումից կոլտնտեսականների տնտեսութուններին, իսկ առանձին դեպքերում նաև աշխատավորական այն մենատնտեսներին, վորոնք չունեն ընտանիքի աշխատունակ անդամներ, յեթե միայն այդ նույն մենատնտեսները չունեն խոշոր անասուններ:

§ 21 Հրահանգի: Սակավազորութեան պատճառով առանձին տնտեսութուններին լրբիվ կամ մասնակի ազատելու հարցը (որեքի 12-րդ հոդված) յուրաքանչյուր առանձին տնտեսութեան նկատմամբ քննութեան են առն-

վում գյուղխորհուրդում և ներկայացվում են չըջգործկումին: Գյուղխորհուրդը ինքնուրույն կերպով տնտեսութեանն ազատելու ինքնահարկից իրավունք չունի:

13 Հոդ. Որեքի: Գյուղական վայրերում ապրող, սակայն գյուղատնտեսութեամբ չպարապող վոչ կոպերացված տնայնագործներն ու արհեստավորները և վոչ վարձու աշխատանքից աշխատավորական յեկամուտ ունեցող մյուս քաղաքացիներն ինքնահարկմանը մասնակցում են հետևյալ չափով:

Տարեկան յեկամտի չափը	Ինքնահարկման չափը ուրլիններով
Մինչև 900 ուրլի	7 ուրբ.
900-ից ավելի մինչև 1500 ո.	15 ուրբ.
1500-ից ավելի մինչև 2100 ո.	20 ուրբ.
2100-ից ավելի մինչև 2700 ո.	45 ուրբ.
2700-ից ավելի մինչև 3300 ո.	60 ուրբ.
3300-ից ավելի	80 ուրբ.

Գյուղխորհուրդներին իրավունք է վերապահվում առանձին դեպքերում ինքնահարկումից ազատել վոչ գյուղատնտեսական յեկամուտ ունեցող այն քաղաքացիներին, վորոնց տարեկան յեկամուտը 480 ուրբուց ցից չէ:

14 Հոդ. Որեքի: 13-րդ հոդվածում մատնանչված անձանց ինքնահարկման չափը վորոշելիս, պետք է յելնել այն յեկամուտից, վորը հաշվի յե առնվում յեկամտային հարկի յենթարկելու համար:

§ 22 Հրահանգի: 13-րդ հոդվածում մատնանչված անձանց ինքնահարկումը հաշվարկելու նպատակով, չըջքինբաթինները տեղեկութուններն են տալիս գյուղխորհուրդներին այդ անցած յեկամտահարկը վորոշելու համար հաշվարկված յեկամուտների մասին, այն է՝

ա) առանց վարձու բանվորների աշխատող վոչ կոպերացված տնայնագործների և արհեստավորների վերաբերյալ—1935 թ. համար յեկամտի նորմաներով վորոշված յեկամուտների մասին:  
բ) մյուս անձանց նկատմամբ՝ այն յեկամուտների

մասին, վորոնց համեմատ հաշվարկված է 1935 թվի  
յեկամտահարկը:

15 Հոդ. Որենքի: Կուլակային տնտեսություններն  
ինքնահարկման են յենթարկվում 1935 թ. գյուղատնտե-  
սական հարկի դրույքի 200 տոկոսի չափով:

16 Հոդ. Որենքի: Այն անձինք, վորոնք գյուղա-  
տնտեսությամբ չեն պարապում, ունեն վոչ աշխատա-  
վորական յեկամուտներ և վճարում են յեկամտային  
հարկ, ինքնահարկման յենթարկվում են այն գումարի  
100 0/0-ի չափով, վորը պետք է հասներ նրանցից, յեթե  
բստ իրենց յեկամուտների նրանք յենթարկվեյին գյուղ-  
հարկի:

§ 23 Հրահանգի: Գյուղատնտեսություն չունեցող  
անձանց յեկամուտների մասին հայտնում է գյուղխոր-  
հրդին շրջանային Փինբաժինը: Մանր առևտրով զբաղ-  
վող, կամ յեկամտահարկ վճարողների 3-րդ կատեգո-  
րիայի շարքը դասվող վոչ կոոպերացված տնայնագործ-  
ների և արհեստավորների նկատմամբ գյուղխորհուրդ-  
ներին հայտնվում է թված անձանց հունիս ամսվա յե-  
կամտի գումարը (կամ նրանց գործունեյության վերջին  
լրիվ ամսվա յեկամուտը, յեթե զբաղմունքը լուծարվել  
է դրանից առաջ), վորը հասցվում է տարեկան յեկա-  
մտի չափին:

§ 24 Հրահանգի: 16-րդ հոդվածի կարգով հարկ-  
վող անձանց ինքնահարկի գումարը վորոշելու ժամա-  
նակ, գյուղհարկի պայմանական հաշվարկը կատարվում  
է կուլակների համար սահմանված դրույքատախտակով  
(գյուղհարկի որենքի 99-րդ հոդ.):

17 Հոդ. Որենքի: Գյուղխորհուրդն ինքնահարկ-  
ման մասին գյուղի ընդհանուր ժողովի ընդունած վո-  
րոշումը, իր յեզրակացության հետ միասին, ներկա-  
յացնում է շրջանային գործադիր կոմիտեյին ի քննու-  
թյուն:

Յեթե տասն որվա ընթացքում շրջանային գործա-  
դիր կոմիտեն գյուղխորհուրդին չհաղորդի վորոշումը  
փոխելու մասին, ապա այդ վորոշումը համարվում է

ուժի մեջ մտած և պարտադիր է բոլոր քաղաքացիների  
համար:

§ 25 Հրահանգի: Ինքնահարկ անցկացնելու մասին  
քաղաքացիների ընդհանուր ժողովի ընդունած վորոշու-  
մը շրջանային գործադիր կոմիտեն պետք է փոխի  
այն դեպքում, յերբ ինքնահարկը ընդունված է  
ավելի քիչ թվով քաղաքացիների կողմից, քան նախա-  
տեսված է որենքի 3-րդ հոդվածում, ինչպես և այն  
դեպքերում, յերբ քաղաքացիների ընդհանուր ժողովի  
վորոշմամբ խախտված են ինքնահարկի որենքով սահ-  
մանված դրույքները, կամ որենքի այլ հոդվածները:

18 Հոդ. Որենքի: Գյուղխորհուրդն ինքնահարկ-  
ման գումարները հավաքում է քաղաքացիների ընդհա-  
նուր ժողովի վորոշմամբ սահմանված ժամկետներում:

Ինքնահարկման ապառքները գանձվում են այն կար-  
գով, վորը սահմանված է գյուղհարկը գանձելու հա-  
մար:

§ 26 Հրահանգի: Կոյտնտեսականներից ստանալիք  
ինքնահարկման վճարումները կատարում են անմիջա-  
բար իրենք կոյտնտեսականները: Կոյտնտեսության վար-  
չության կողմից կոյտնտեսականի հաշիին ինքնահար-  
կում մուծելը կատեգորիկ կերպով արգելվում է:

§ 27 Հրահանգի: Ինքնահարկման վճարումները րն-  
դունվում է գյուղհարկի համար սահմանված կարգով:

§ 23 Հրահանգի: Ինքնահարկումը սխալ հաշվար-  
կելու վերաբերյալ բողոքները տրվում են գյուղխոր-  
հուրդներին ինքնահարկման գումարի մասին ծանուցա-  
գրեր հանձնելու պահից 10 որվա ընթացքում:

§ 29 Հրահանգի: Գյուղխորհուրդն ինքնահարկ-  
ման վերաբերյալ ստացած բոլոր բողոքները պարտավոր  
է քննել վոչ ուշ քան 5 որվա ընթացքում և արդյունքնե-  
րի մասին հայտնել բողոքողներին գրավոր ձևով:

§ 30 Հրահանգի: Գյուղխորհուրդի վորոշման դեմ  
կարելի է բողոքարկել շրջանային գործադիր կոմիտե-  
յին վորոշումը հատարարելուց հետո 10 որվա ընթաց-  
քում: Երբ գործկոմի վորոշումը վերջնական է:

§ 31 Հրահանգի: Դաշնակից և ինքնավար հանրապետութիւններէ Ֆինստոկոմատները, յերկրային Ֆիննասական վարչութիւնները և շրջանային Ֆինթա-ժինները պատասխանատու են ինքնահարկման բոլոր աշխատանքները ճիշտ և ժամանակին անցկացնելու, ինչպէս և որենքով սահմանված ժամկետներին կոլտնտեսականներից և մենատնտեսներից ինքնահարկի գումարները լրիվ գանձելու համար:

Ֆիննասական մարմինները պարտավոր են ունենալ սխտեմատիկ հսկողութիւն և ցույց տալ գործնական ոգնութիւն գյուղխորհուրդներին ինքնահարկման կիրառման ասպարիզում, ապահովելով ինքնահարկման յենթակա տնտեսութիւնների լրիվ ընդգրկումը, նրանց գրույթների ճիշտ հաշվարկը և որենքի ու հրահանգի անշեղ կիրառումը:

Որենքը խախտող և աղավաղող մեղավոր բոլոր անձինք անմիջապէս պետք է յենթարկվեն պատասխանատվութիւն:

### ԻՆՔՆԱՀԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

§ 32. Հրահանգի: 1935 թ. ինքնահարկումը հաշվարկելու համար վճարողների առանձին հաշվառում չի կատարվում: Ինքնահարկումը հաշվարկելու համար բոլոր անհրաժեշտ ցուցանիշները վերցվում են 1935 թ. գյուղխորհուրդի տնտեսութիւնների հաշվառման գրքերից:

§ 33. Հրահանգի: Վճարողներից գանձված ինքնահարկման գումարները գրանցվում են մուտքի որագրում (գյուղխորհուրդի հաշվառման ձև № 23) և յուրաքանչյուր վճարողի անձնական հաշիվում, վորը բացվում է բնակչութիւն կողմից պետութիւն հանգեպ պարտավորութիւնների կատարման գրքում («գրամական վճարումներ» գյուղխորհուրդի հաշվառման ձև № 3 բաժին 8-րդ):

§ 34. Հրահանգի: Ինքնահարկման կարգով գանձ-

ված այն գումարները, վորոնք հատկացվում են գրքա-բոցաշինարարութիւն համար, փոխանցվում են Պետ-րակ-շրջանային գործադիր կոմիտեյի հաշիվին, հետևեյալ անունով՝ «գյուղական վայրերի գալրոցաշինարարութիւն համար հատկացված ինքնահարկման գումարներ»:

Դպրոցաշինարարութիւն համար հատկացված ինքնահարկման միջոցների ողտագործման ստուգելու կարգը սահմանվում է ՄՆՀՄ Ֆինստոկոմատի և ՍՆՀՄ Պետրանկի վարչութիւն կողմից:

Ինքնահարկման կարգով գանձված այն գումարները, վորոնք մնում են գյուղխորհուրդի տրամադրութիւն տակ, պահվում են գյուղխորհուրդի առանձին հաշիվում հետևեյալ անվամբ՝ «գյուղական բյուջեյով չնախատեսված կարիքների համար ինքնահարկման գումարներ»:

§ 35. Հրահանգի: Մուծվող ինքնահարկման բոլոր գումարները, գյուղխորհուրդի կողմից նույն ուրը և յետ գրանցվում են գրամարկղային գրքի (գյուղխորհուրդի հաշվառման ձև № 26) «պետական և այլ գումարներ» սյունյակում:

§ 36. Հրահանգի: Գյուղխորհուրդի տրամադրութիւն տակ մնացող ինքնահարկման գումարների հաշվառման համար «առ հաշիվ անձանց գանազան գումարների և հաշվարկների» (գյուղխորհուրդի հաշվառման ձև № 28) գրքում բացվում է առանձին անձնական հաշիվ գանազան գումարների և հաշվարկների հաշվառման մասում: Գյուղխորհուրդի տրամադրութիւն տակ մնացած ինքնահարկման գումարները գրանցվում են 4-րդ սյունյակում: Գուրս գրվող ծախսերի գումարները նշանակվում են 5-րդ սյունյակում: 4-րդ և 5-րդ սյունյակներում կատարված ամեն մի գրանցումից հետո, գուրս է բերվում միջոցների ազատ գումարը և գրվում է 6-րդ սյունյակում:

Յեթե ի հաշիվ ինքնահարկման գումարների գյուղ-

խորհրդի կողմից նախատեսված լինի յերկու և ավելի ձեռնարկումների իրագործում, ապա ամեն մի ձեռնարկման նախաձեռնողին նշանակումների վրա հսկելու համար գրքի այդ նույն մասում կարող են բացվել առանձին անձնական հաշիվներ:

Այդ դեպքում 4-րդ սյունյակում գրվում է տվյալ ձեռնարկումը անցկացնելու համար նախաձեռնող ընդունված գումարը:

5-րդ սյունյակում պետք է գրել տվյալ ձեռնարկման վրա կատարած յուրաքանչյուր ծախքի ամեն մի գումարը: 5-րդ սյունյակում գրելուց հետո հանվում են տվյալ ձեռնարկման համար հատկացված, սակայն չողտագործված մնացորդները և ցույց են տրվում 6-րդ սյունյակում:

Գրքի այդ նույն «առհաշիվ անձանց, զանազան գումարների և հաշվարկների» մասում բացվում է Ֆինբաժնի համար անձնական հաշիվ, վորտեղ պահվում է հրահանգի § 34-ի կարգով շրջագործկոմի ընթացիկ հաշվին փոխանցված ինքնահարկման գումարների հաշիվը:

§ 37 Հրահանգի: Ինքնահարկման հաշվարկման արդյունքների հաշվետվութունը կազմվում է տարեկան մեկ անգամ սահմանված ձևով (գյուղխորհրդի հաշվառման ձև № 19 և շրջագործկոմի հաշվետվության ձև № 54):

Հաշվետվության համար կազմվում են ոժանդակ ցուցակներ, ըստ գյուղհարկի խմբավորման:

Ոժանդակ ցուցակները միացնում են հետևյալ 5 խմբերի:

1. Չհանրայնացված յեկամուտներ չունեցող, կամ 1935 թ. գյուղհարկից ազատված կուտնտեսականներ:
2. 1935 թ. գյուղհարկով հարկվող կուտնտեսականներ:
3. Աշխատավոր մենատնտեսների տնտեսություններ:
4. Կուլակային տնտեսություններ:

5. Ինքնահարկման յենթարկված վոչ գյուղատնտեսական բնակչութուն:

Հաշվետվության առանձին սյունյակները լրացնելու ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալով՝

ա) հաշվետվության 2-րդ սյունյակում գրվում են 1935 թ. գյուղհարկի կիրառման ժամանակ հաշվի առված բոլոր տնտեսությունների թիվը, ըստ վորում 5-րդ սորում (վոչ գյուղատնտեսական բնակչութուն) հարկվող յեկամուտներ չունեցող տնտեսությունների ընդհանուր թիվից, գրվում են միայն այն անձանց տնտեսությունները, վորոնք ինքնահարկման են յենթարկվում որենքի 13 և 16-րդ հոդվածների կարգով:

բ) 3-րդ սյունյակը լրացնելու համար տնտեսությունների ընդհանուր թիվից պետք է ջոկել ինքնահարկում վճարող տնտեսություններին, այսինքն տնտեսությունների ընդհանուր թիվից հանվում են արտոնության կարգով լրիվ ազատված տնտեսությունները:

գ) 4-րդ սյունյակում գրվում է բոլոր տնտեսությունների համար հաշվարկված (2-րդ սյունյակի) ինքնահարկման գումարը մինչև արտոնություններ և ղեղջեր տալը:

դ) 5-րդ սյունյակում գրվում է վճարման յենթակա ինքնահարկման գումարը:

Հաշվետվությունները կազմվում են գյուղխորհրդի հաշվետարի (իսկ այնտեղ վորտեղ հաշվետարներ չկան, քարտուղարների) կողմից և ներկայացվում են շրջֆինբաժնին 1935 թ. սեպտեմբերի 1-ին:

Ֆինամարմինների կողմից ինքնահարկման վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները սահմանվում են 1935 թ. սեպտեմբերի 1-ը:

§ 38 Հրահանգի: Ինքնահարկման մուծումների ըն-

ՀՀ Ազգային գրադարան



NL0204452

Թացքի մասին տեղեկութիւններ ներկայացվում են  
բնակչութեան միջոցներէ մտրիլիզացիայի վերաբերյալ  
հաշվեալութեան հետ միատեղ:

ՀՍԽՀ-ի Ֆինտողիտմ՝ Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ

Մասսայական վճարումների վարչութեան պետ՝  
ՋԱ.Վ.Ա.ՀԻՐՅԱՆ

